«Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ

Brot für die Welt

«Հաց աշխարհի համար-Գերմանիա»

ՀՀ Գեղարքունիքի, Շիրակի եւ Սյունիքի մարզերի համայնքների համացանցային պաշտոնական կայքերի բովանդակային մոնիտորինգ

ԶԵԿՈՒՅՑ

2016թ.

«Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ

«Հաց աշխարհի համար-Գերմանիա»

ՀՀ Գեղարքունիքի, Շիրակի եւ Սյունիքի մարզերի համայնքների համացանցային պաշտոնական կայքերի բովանդակային մոնիտորինգ

ԶԵԿՈՒՅՑ

2016թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն 3

2. Մոնիտորինգի իրավական հիմքերի վերլուծություն 4

3. Մոնիտորինգի նպատակները և խնդիրները....8

3.1. Նպատակները....8

3.2. Խնդիրները....8

4. Մոնիտորինգի առարկան, տեղեկատվության աղբյուրները, իրականացման փուլերը, մեթոդաբանությունը....9

4.1. Մոնիտորինգի առարկան....9

4.2. Մոնիտորինգի տեղեկատվության աղբյուրները....9

4.3. Մոնիտորինգի իրականացման փուլերը....10

4.4. Մոնիտորինգի իրականացման մեթոդաբանությունը....10

5. ՀՀ Գեղարքունիքի, Շիրակի և Սյունիքի մարզերի համայնքների պաշտոնական համացանցային կայքերի դիտարկումների արդյունքները....12

5.1. Դիտարկված կայքերը....12

5.2. Պաշտոնական համացանցային կայքի վարման կարգի հաստատումը համայնքապետարանների կողմից....16

5.3. Համայնքապետարանների մարդկային և մասնագիտական կարողությունները իրենց կայքերի շահագործման ոլորտում....18

5.4. Տեղեկատվական մատչելիության վարկանիշները....21

5.5. Գնահատման ընթացքը և վեր հանված հիմնական խնդիրները....28

6. Եզրակացություններ.... 42

7. Առաջարկություններ....44

Հավելված N1. Տեղեկանք համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի մասին....46

Հավելված N2. Համայնքային պաշտոնական կայքերում բովանդակության հետազոտության և վերլուծության համար ընդունված չափորոշիչները ըստ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. ապրիլի 8-ի N280-Ա հրամանի....46

Հավելված N3. Համայնքապետարանների համացանցային պաշտոնական կայքերում տեղեկությունների միավորներով գնահատման սանդղակ....47

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը սահմանում է. «Համայնքը պետական համակարգի ժողովրդավարական հիմքն է»[1]: Հետևապես տեղական ինքնակառավարումն անհնարին է պատկերացնել առանց ժողովրդավարական միջավայրի, քաղաքացիական ներգրավվածության և տեղական ինքնակառավարման ոլորտի դերակատարների ժողովրդավարական գործելակերպի:

Տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) կողմից թափանցիկության, հրապարակայնության և բնակչությանը հաշվետու լինելու մասին սկզբունքներն ամրագրված են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, սակայն հաշվետու լինելը դեռևս չի դարձել ՏԻՄ-երի գործունեության սկզբունքային, անբաժանելի և առաջնային բաղադրատարրը:

Ցավոք, ընդհանուր ուրվագծերն այսպիսին են: Համայնքապետերի կողմից միանձնյա կառավարում, համայնքային մասնակցությունից մեկուսացած համայնքապետարաններ, փակ գործելակերպ, ավագանու նիստերի մասին իրազեկության պահանջի չպահպանում: Իհարկե, կան նաև օրենսդրության պահանջները պահպանող և իրականացնող համայնքապետարաններ, սակայն դրանք սակավաթիվ են:

ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության և թափանցիկության ապահովման կարևորությունը և արդիականությունն անխզելիորեն կապված են մարդու իրավունքների և ազատությունների իրացման, մարդկանց իրական կյանքի և ամենօրյա պահանջմունքների բավարարման հետ: Հետևապես ՏԻՄ-երի կողմից օրենսդրությամբ պահանջվող տեղեկությունների հրապարակումը համացանցում օրեցօր ավելի արդիական ու պահանջված է դառնում:

Համացանցային տեղեկատվության և հատկապես համայնքների պաշտոնական կայքերի ստեղծման ու գործարկման միջոցով ՏԻՄ-երը պետք է համայնքային և առավել լայն հանրությանը իրազեկեն իրենց գործունեության մասին և հնարավորություն տան համայնքների անդամներին մասնակցելու համայնքի կառավարման և որոշումների ընդունման գործընթացներին: Համայնքային պաշտոնական կայքերը պետք է հնարավորություն ընձեռեն ժամանակին և առավելագույն տեղեկություններ ստանալու ՏԻՄ-երի գործունեության մասին, ապահովեն օրենսդրությամբ պահանջվող իրավական ակտերի հրապարակումը:

Ելնելով վերոհիշյալից՝ «Ա.Դ.Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ-ի կողմից «Հաց աշխարհի համար/Brot fur die Welt-Գերմանիա» կազմակերպության աջակցությամբ իրագործվող «Քաղաքացիական հասարակության հզորացում ՀՀ մարզերում» դրամաշնորհային N20140366 ծրագրի շրջանակներում իրականացվել է ՀՀ Շիրակի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերի համայնքների համացանցային պաշտոնական կայքերի մոնիտորինգ՝ նպատակ ունենալով վերհանել այս ոլորտում առկա խնդիրները և նպաստել դրանց կարգավորմանը: Դիտարկվել են նշված մարզերի համայնքների համացանցային առկա պաշտոնական կայքերը[2]:

Քանի որ ՏԻՄ-երի գործունեության համացանցային մատչելիության ապահովումը շարունակաբար կատարելագործման կարիք ունի, իրականացված մոնիտորինգի արդյունքում ներկայացվում են առաջարկություններ՝ ուշադրություն հրավիրելով առկա խնդիրների և դրանց լուծման ուղիների վրա:

Զեկույցը հասցեագրված է տարածքային կառավարման մարմիններին, ՏԻՄ-երին, քաղաքացիական հասարակության կառույցներին, ՁԼՄ-ներին և համայնքների համացանցային պաշտոնական կայքերի օգտատերերին:

1. ՀՀ օրենքը տեղական ինքնակառավարման մասին: Հոդված 4. Համայնքը:
2. Օրենսդրորեն սահմանված չէ «համայնքային պաշտոնական համացանցային կայք» հասկացությունը (տես էջ 12):

2. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Տեղական ինքնակառվարման մարմինների գործունեության մասին տեղեկատվության մատչելիության Հայաստանի Հանրապետության օրենսդրական հիմքը ՀՀ Սահմանադրությունն է[3]: Սահմանադրական դրույթներն իրենց հետագա զարգացումն են ստացել ՀՀ օրենսդրական այլ ակտերով, որոնք ներկայացվում են ստորև:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի[4] համաձայն՝ համայնքի անդամների առջև ՏԻՄ-երի հաշվետու լինելը, ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը տեղական ինքնակառավարման սկզբունքներից են: Այս սկզբունքների կենսագործման համար արդիական և արդյունավետ գործիք կարող են հանդիսանալ համայնքային պաշտոնական համացանցային կայքերը, որոնց միջոցով ՏԻՄ-երի գործունեությունը մատչելի կդառնա հանրության համար:

Վերջին տասնամյակի ընթացքում գնալով կարևորվում է տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը տեղական ինքնակառավարման համակարգում, սակայն մեր օրենսդրությունը չի պարտադրում տեղական ինքնակառավարման մարմիններին ունենալ պաշտոնական համացանցային կայքեր: ՀՀ կառավարությունը 2014թ. մարտի 19-ի N11 արձանագրային որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության տեղեկատվայնացման և տեղական տեղեկատվական հասարակության զարգացման քաղաքականության հայեցակարգին»[5], որով առաջարկվում է զարգացնել տեղեկատվայնացման ոլորտին առնչվող օրենսդրական դաշտը, մշակել ՏԻՄ–երի գործունեության տեղեկատվայնացման խթանմանն ուղղված համապատասխան օրենքներ և այլ իրավական ակտեր, սակայն չի առաջարկվում պարտադիր դարձնել համայնքային պաշտոնական կայքերի ստեղծումը:

2015թ. ապրիլի 8-ին ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի N280-Ա հրամանով հաստատվել է համայնքի (քաղաքապետարանի/գյուղապետարանի) պաշտոնական կայքերի վարման օրինակելի կարգ[6], որն այս ոլորտի կանոնակարգման ևս մեկ քայլ է: Մինչ հրամանի կառուցվածքային և բովանդակային վերլուծուլյուն կատարելը նկատենք, որ համայնքների առկա, արդեն իսկ գործող պաշտոնական կայքերի գերակշիռ մեծամասնությունը ստեղծվել է հրամանից առաջ:

Նախ նշենք, թե համացանցային կայքերի առկայության դեպքում ՏԻՄ-երը օրենսդրորեն սահմանված ո՞ր պահանջների կիրարկումը պետք է ապահովեն:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված է, որ ավագանու հերթական նիստի ժամանակի, վայրի վերաբերյալ հրապարակված տեղեկությունը և օրակարգի նախագիծը հնարավորության դեպքում լրացուցիչ կերպով կարող է տարածվել զանգվածային լրատվության միջոցներով և ինտերնետային ցանցի միջոցով[7]: 19.06.2013թ. նույն օրենքում կատարվել են մի շարք լրացումներ[8], որոնք միտված են տեղական ինքնակառավարման որոշումների կայացման գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցության մակարդակի բարձրացմանը: Իսկ օրենքի 10.1.-րդ հոդվածին համապատասխան[9]՝ համայնքի

3. ՀՀ Սահմանադրություն: Հոդված 27:
4. ՀՀ օրենքը տեղական ինքնակառավարման մասին: Հոդված 9. Տեղական ինքանակառավարման սկզբունքները:
5. ՀՀ կառավարության 2014թ. մարտի 19-ի ? 11 արձանագրային որոշում: Հավելված 1:
6. 2015թ. ապրիլի 8-ին ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի N 280-Ա հրաման: Հավելված:
7. ՀՀ օրենքը տեղական ինքնակառավարման մասին: Հոդված 121. Տեղեկացումը համայնքի ավագանու նիստերի մասին:
8. ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին (ՀՕ-72-Ն):
9. ՀՀ օրենքը տեղական ինքնակառավարման մասին: Հոդված 101. Համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:

ավագանու որոշմամբ տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգի սահմանմամբ հնարավորություն է ընձեռվում առավել ակտիվորեն, կանոնակարգված մասնակցելու իրենց կյանքին, կենցաղին և ամբողջությամբ համայնքին վերաբերող որոշումների կայացման գործընթացին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով նախատեսված է, որ 7-րդ հոդվածի «2-րդ և 3-րդ մասերում նշված տեղեկությունները հրապարակվում են հանրության համար մատչելի ձևով, տեղեկատվություն տնօրինողի համացանցային էջի առկայության դեպքում՝ նաև դրանով»[10]: Փաստորեն, եթե ՏԻՄ-երն ունեն համացանցային էջեր, ապա սույն օրենքով նախատեսված տեղեկությունների հրապարակումն արդեն օրենսդրական պարտադիր պահանջ է դառնում:

Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի՝«Տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերը ենթակա են պարտադիր պաշտոնական հրապարակման»[11]: Նույն օրենքով նաև սահմանված է. «Իրավական ակտերի պաշտոնական կամ ոչ պաշտոնական հրատարակումն իրականացվում է այդ իրավական ակտերը կամ դրանց քաղվածքները թղթի վրա, էլեկտրոնային կամ այլ կրիչների վրա տպագրման կամ բազմացման, ինչպես նաև էլեկտրոնային կամ այլ ցանցերով դրանց տարածման միջոցով»[12]:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով նաև նախատեսվում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի տեղադրում նախագիծը մշակող մարմնի կողմից. «Հանրային քննարկումներն իրականացվում են նախագիծը մշակող մարմնի ինտերնետային կայքում նորմատիվ իրավական ակտի նախագիծը, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախատեսված այլ նյութերը հրապարակելու միջոցով, իսկ նախագիծ մշակող մարմնի նախաձեռնությամբ կարող են իրականացվել հանրային կամ շահագրգիռ անձանց հետ հանդիպումների, բաց լսումների, քննարկումների, հասարակական հարցումների, ինչպես նաև հեռահաղորդակցության հնարավոր միջոցներով»[13]:

«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի պահանջով ևս օրենքով կամ նորմատիվ իրավական այլ ակտով սահմանված այն դեպքերում, երբ նախատեսվում է հրապարակային ծանուցում՝ տեղեկատվությունը մամուլում հրապարակելու միջոցով, հրապարակային ծանուցումը պետք է տեղադրվի նաև կայքում[14]: Նույն օրենքը սահմանում է նաև. «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հրապարակվող հրապարակային ծանուցումը հրապարակվում է կայքում անմիջապես այն ստանալու պահից»[15]:

ՀՀ կառավարության 12.04.2001թ. «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N286 որոշման 59.2.-րդ կետով նախատեսվում է. «Երևան քաղաքում և քաղաքային այլ համայնքներում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային կարգով օտարման և մրցութային կարգով վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման վերաբերյալ հայտարարությունները՝ սույն կարգով սահմանված տեքստային և գրաֆիկական տեղեկու-

10. ՀՀ օրենքը տեղեկատվության ազատության մասին: Հոդված 7. Տեղեկությունների մատչելիության և հրապարակայնության ապահովումը:
11. ՀՀ օրենքը իրավական ակտերի մասին: Հոդված 56. Տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերը հրապարակելը և դրանց ուժի մեջ մտնելը:
12. ՀՀ օրենքը իրավական ակտերի մասին: Հոդված 67. Իրավական ակտերի պաշտոնական և ոչ պաշտոնական հրապարակման կարգը:
13. ՀՀ օրենքը իրավական ակտերի մասին: Հոդված 27.1. Իրավական ակտի կարգավորման ազդեցության գնահատումը:
14. ՀՀ օրենքը ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին: Հոդված 3. Հրապարակային ծանուցումը կայքի միջոցով:
15. ՀՀ օրենքը իրավական ակտերի մասին: Հոդված 6. Կայքում հայտարարություն տեղադրելը:

թյուններով փաթեթը, զետեղվում են համապատասխան քաղաքապետարանի ինտերնետային կայքում»[16]: Այս որոշմամբ, փաստորեն, ինտերնետային կայքում նշված տեղեկությունների զետեղման պահանջը վերաբերում է միայն քաղաքապետարաններին:

ՀՀ կառավարության 25.03.2010թ. N296-Ն որոշմամբ հաստատվել է «Նորմատիվ իրավական ակտերի նախագծի հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման կարգ»[17], որի համաձայն ևս նախագիծ մշակող մարմինը իր համացանցային կայքում պետք է հրապարակի «նորմատիվ իրավական ակտի նախագիծը, իրավական ակտի ընդունման հիմնավորումը, ինչպես նաև նախագիծ մշակող մարմնի հայեցողությամբ այլ նյութեր», համացանցային կայքում պետք է հրապարակի հանրային քննարկումների հրավեր, «հանրային քննարկումների ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձինք համացանցային կայքում հրապարակված նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտողությունները, որոնք կարող են թողնվել համացանցային կայքում հատուկ այդ նպատակով ստեղծված տեղում կամ ուղարկվել համապատասխան էլեկտրոնային հասցեով», ինչպես նաև «հանրային քննարկումների ավարտից հետո 15-օրյա ժամկետում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված ամփոփաթերթը և նախագծի լրամշակված տարբերակը [...] պետք է տեղադրվի նախագիծ մշակող մարմնի համացանցային կայքում»: Փաստորեն, համացանցային կայքի առկայության պարագայում ՏԻՄ-երը պետք է ապահովեն վերոհիշյալ որոշման պահանջների կատարումը:

2013թ. դեկտեմբերի 26-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին» N1521-Ն որոշումը[18], որով հաստատվել են ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները: Ընդունված որոշմամբ տեղական ինքնակառավարման և պետական այլ մարմիններին առաջարկվել է իրենց պաշտոնական կայքերը համապատասխանեցնել այդ որոշման պահանջներին:

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 18.12.2013թ. N10-Ն հրամանով[19] մարզպետի գործունեությունը գնահատվում է ինչպես մարզի համայնքներում «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ»-ի ներդրման, այնպես և համայնքներում համացանցային պաշտոնական կայքերի առկայության և դրանց միջոցով տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության և թափանցիկության ապահովման չափորոշիչներով:

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. ապրիլի 8-ի N280-Ա հրամանով հաստատված համայնքի պաշտոնական կայքերի վարման օրինակելի կարգը ներառում է արդեն պարտադիր տեղեկությունների ցանկը, որոնք պետք է տեղադրվեն համայնքապետարանների կողմից: Նախ, նշենք, որ հրամանը հասցեական չէ, քանի որ պարզ չէ, թե որ քաղաքապետարաններին և գյուղապետարաններին է այն ուղղված: Եթե բոլորին, ապա կնշանակի, որ բոլոր համայնքապետարանները պետք է ընդունեն պաշտոնական կայքերի վարման կարգ՝ անկախ այն հանգամանքից՝ կայք ունե՞ն, թե՞ ոչ: Երկրորդ՝ հրամանը չի սահմանում համայնքների կողմից պաշտոնական կայքերի վարման կարգի ընդունման որևէ ժամանակահատված: Նաև չի սահմանում, թե ո՞ր համայնքապետարանները պետք է առաջնահերթ ընդունեն կարգը, որո՞նց համար է կարգի ընդունումը պարտադիր: Սա նշանակում է, որ համայնքապետարանները կարող են կարգն ընդունել ըստ իրենց հա-

16. ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 4-ի N286 որոշում:
17. ՀՀ կառավարության 2010թ. մարտի 25-ի N296-Ն որոշում: Հավելված:
18. ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 26-ի N1521-Ն որոշում:
19. ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2013թ. դեկտեմբերի 18-ի N10-Ն հրաման:

յեցողության և երբ որ ցանկանան: Մինչ այս իրավական ակտի ուժի մեջ մտնելը՝ համայնքների առկա պաշտոնական կայքերի զգալի մեծամասնությունը գործում էր համայնքներում ներդրված կառավարման տեղեկատվական համակարգերի (ՀԿՏՀ) միջոցով[20], ինչպես նաև քիչ թվով համայնքներ հիմնել էին իրենց պաշտոնական կայքերը: Հրամանից հետո բոլոր համայնքների պաշտոնական կայքերը պետք է պարունակեն օրինակելի կարգով սահմանված պահանջվող բոլոր տեղեկությունները, այսինքն՝ համայնքի պաշտոնական կայքի վարման կարգ ընդունելուց հետո արդեն իսկ գործող կայքերը պետք է համապատասխանեցվեին հրամանի պահանջներին: Հենց այս գործընթացն էլ մեր կողմից դիտարկվել է:

Այսպիսով, ՏԻՄ-երի գործունեության արդյունավետությունն ու որակը բարձրացնելու, համայնքի անդամների առջև հաշվետու լինելու, համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու և կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու էական նախադրյալներից է ՏԻՄ-երում պաշտոնական համացանցային կայքերի պարտադիր ստեղծումը և դրանց պատշաճ գործարկումը:

20. Ստեղծվել է «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ (ՏՀԶՎԿ ՀԿ) կողմից և շահագործվում է համայնքներում՝ www.infosys.am: Տե՛ս հավելված N1:

3. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1. Նպատակները

- Նպաստել ՀՀ Գեղարքունիքի, Շիրակի և Սյունիքի մարզերի համայնքների համացանցային պաշտոնական կայքերի հրապարակայնության, թափանցիկության բարձրացմանը և համայնքի անդամների առջև հաշվետվողականության ապահովմանը:
- Նպաստել ՀՀ Գեղարքունիքի, Շիրակի և Սյունիքի մարզերի համայնքների համացանցային պաշտոնական կայքերում օրենսդրությամբ պահանջվող տեղեկությունների հրապարակման գործընթացին և հասարակության տեղեկատվական պահանջմունքների բավարարմանը:

3.2. Խնդիրները

- Իրականացնել ՀՀ Գեղարքունիքի, Շիրակի և Սյունիքի մարզերի համայնքների համացանցային պաշտոնական կայքերում օրենսդրությամբ պահանջվող զետեղված տեղեկությունների բովանդակային ուսումնասիրություն:
- Մշակել չափորոշիչներ և գնահատել ՀՀ Գեղարքունիքի, Շիրակի և Սյունիքի մարզերի համայնքների համացանցային պաշտոնական կայքերում առկա տեղեկությունների լիարժեքությունը:
- Ուսումնասիրել և բացահայտել ՀՀ Գեղարքունիքի, Շիրակի և Սյունիքի մարզերի համայնքային համացանցային պաշտոնական կայքերի, համայնքներում որպես պաշտոնական կայք գործարկվող կառավարման տեղեկատվական համակարգերի և դրանց կիրառման հետ կապված հիմնական խնդիրները, ներկայացնել առաջարկություններ, որոնք կօգնեն բարելավել համայնքների համացանցային պաշտոնական կայքերի բովանդակային և կառուցվածքային աշխատանքը և կնպաստեն ՏԻՄ-երի աշխատանքների հրապարակայնության, թափանցիկության և համայնքի առջև հաշվետվողականության բարձրացմանը:
- Պատրաստել մոնիտորինգի զեկույց և ներկայացնել տարածքային կառավարման մարմիններին, ՏԻՄ-երին, քաղաքացիական հասարակության կառույցներին և համայնքների համացանցային պաշտոնական կայքերի օգտատերերին:

4. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՌԱՐԿԱՆ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ, ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Մոնիտորինգի առարկան

ՀՀ Գեղարքունիքի, Շիրակի և Սյունիքի մարզերի համայնքների համացանցային պաշտոնական կայքերի բովանդակության համապատասխանությունն է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին ՀՀ օրենսդրությամբ ու այլ նորմատիվ իրավական ակտերով կարգավորող տեղեկությունների մատչելիությանը և հրապարակայնությանը:

4.2. Մոնիտորինգի տեղեկատվության աղբյուրները

- ՀՀ Գեղարքունիքի, Շիրակի և Սյունիքի մարզերի համայնքների համացանցային պաշտոնական կայքեր:
- Վերոհիշյալ մարզերի համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ (ՀԿՏՀ) ունեցող համայնքների (www.infosys.am կայք) էջեր:
- ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության պաշտոնական կայք (www.mta.gov.am):
- Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ (www.arlis.am):
- «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ, «Հայաստանում տեղական ինքնակառավարման մարմինների տեղեկատվայնացման և տեղական տեղեկատվական հասարակության զարգացման քաղաքականությունը», 2013, Երևան:
- «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ, «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ: Օգտագործողի ձեռնարկ», 2010, Երևան:
- «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» ՀԿ, «Հայաստանի պետական մարմինների տեղեկատվության մատչելիությունը», 2010թ.:
- «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» ՀԿ, «Պետական կայքերի բովանդակության ստանդարտացումը և տեղեկատվական բացերը», 2014թ.:
- ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությանն հղված ընդհանուր թվով 2 գրությունների պատասխաններ:
- Մարզպետարաներին հղված ընդհանուր թվով 5 գրավոր հարցումների պատասխաններ:
- Համայնքապետարաններին հղված ընդհանուր թվով 61 հարցումների պատասխաններ:

4.3. Մոնիտորինգի իրականացման փուլերը

1. Նախապատրաստական փուլ	
Գեղարքունիքի, Շիրակի և Սյունիքի մարզերի համայնքային կայքերի դիտարկման համար մոնիտորինգի բովանդակային և կառուցվածքային իրականացման սկզբունքների մշակում	Հուլիս-օգոստոս, 2015
Համացանցային կայքերի վերաբերյալ նախնական տեղեկատվության հավաքում	Օգոստոս, 2015
Ոլորտի հետ առնչվող օրենսդրական դաշտի ուսումնասիրության իրականացում	Օգոստոս-հոկտեմբեր, 2015
Մոնիտորինգին առնչվող տեղեկատվության հարցումների իրականացում	Օգոստոս-նոյեմբեր, 2015
ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թ. ապրիլի 8-ի N280-Ա հրամանի կառուցվածքային և բովանդակային վերլուծության իրականացում	Օգոստոս-դեկտեմբեր, 2015
«Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի» կառուցվածքին ու գործառույթներին առնչվող հարցերով փորձագիտական խորհրդատվություն ստանալու նպատակով հանդիպումների իրականացում համակարգը ստեղծող և շահագործող «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ի նախագահ Գրիշա Խաչատրյանի հետ	Հոկտեմբեր-նոյեմբեր, 2015
Մոնիտորինգի իրականացման չափորոշիչների (բալային համակարգի) մշակում և վերանայում	Օգոստոս-դեկտեմբեր, 2015
Մոնիտորինգի տվյալների մուտքագրման աղյուսակի, զեկույցի մակետի և այլ նյութերի մշակում	Հոկտեմբեր, 2015
2. Բուն մոնիտորինգի իրականացում	
Համայնքների համացանցային պաշտոնական կայքերի ուսումնասիրում և ձեռք բերված տվյալների փաստաթղթավորում ու ամբարում	Հոկտեմբեր-դեկտեմբեր, 2015
Գնահատում ըստ չափորոշիչների համակարգի՝ բալային աղյուսակով	Դեկտեմբեր, 2015
3. Ամփոփում	
Մոնիտորինգի զեկույցի կազմում	Հունվար-փետրվար, 2016
Մոնիտորինգի արդյունքների հանրային ներկայացում	Փետրվար, 2016

4.4. Մոնիտորինգի իրականացման մեթոդաբանությունը

1. ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թ. ապրիլի 8-ի N280-Ա հրամանի հավելվածի համաձայն՝ կազմվել է համայնքապետարանների համացանցային պաշտոնական կայքերում ուսումնասիրվող ընդհանուր թվով 32 նվազագույն տեղեկությունների ցանկ: Ըստ այդմ՝ հետազոտության և վերլուծության համար հիմք են ընդունվել 32 չափորոշիչներ (տե՛ս հավելված N2):

2. Մշակվել է համայնքապետարանների համացանցային պաշտոնական կայքերում տեղեկությունների միավորներով գնահատման սանդղակ (տես հավելված N3), համաձայն որի բուն մոնիտորինգի ընթացքում առցանց ռեժիմով տեղեկությունների առկայությունը գնահատ-

վել է 0-9 միավորով՝

1. տեղեկությունների ամբողջականության խիստ ցածր աստիճան՝ 0-1 միավոր,
2. տեղեկությունների ամբողջականության ցածր աստիճան՝ 2-3 միավոր,
3. տեղեկությունների ամբողջականության միջին աստիճան՝ 4-5 միավոր,
4. տեղեկությունների ամբողջականության միջինից բարձր աստիճան՝ 6-7 միավոր,
5. տեղեկությունների ամբողջականության բարձր աստիճան՝ 8-9 միավոր:

3. Մշակվել է համայնքապետարանների համացանցային պաշտոնական կայքերում տեղադրված տեղեկությունների գնահատման միասնական մոտեցումների աշխատանքային փաստաթուղթ, որում մանրամասնվել են յուրաքանչյուր չափորոշիչի գնահատման համար դիտարկման առանձին մոտեցումները:

4. Ուսումնասիրվել է ընտրված կայքերի բովանդակությունը, կատարվել է յուրաքանչյուր համայնքապետարանի կայքում տեղադրված չափորոշիչների գնահատում «առկայություն/բացակայություն» բնութագրիչով, յուրաքանչյուր չափորոշիչի համար տրվել է համապատասխան գնահատական: Ապա հաշվարկվել է 32 գնահատված չափորոշիչների վերջնական արժեքը (ընդհանուր միավորների քանակը), որն էլ տվյալ կայքի տեղեկատվական մատչելիության ամփոփիչ վարկանիշն է:

5. Վերջնական արժեքը (ընդհանուր միավորների քանակը) ներկայացվել է տոկոսային հարաբերությամբ՝ վերցնելով բոլոր գնահատականների ընդհանուր գնահատականը 100 տոկոսի չափով: Յուրաքանչյուր գնահատականի կշիռը հաշվարկվել է ապրիորի 9 միավոր, 100 տոկոսանոց գնահատականը կլինի 9*32=288 միավոր: Տոկոսային հարաբերությունը հաշվարկվել է 100*X/288 ձևով: Օրինակ, եթե համայնքապետարանի կայքի տեղեկությունների տեղադրման գնահատման վերջնական արժեքը 48 է, ապա տոկոսային հարաբերությունը կլինի 100*48/288=16,7,0%:

6. Ելնելով տեղեկատվական մատչելիության ամփոփիչ վարկանիշներից՝ ըստ 3 մարզերի առանձնացվել են 6-ական առաջատար վարկանիշ ունեցող համայնքային պաշտոնական համացանցային կայքերը: Առանձնացվել են նաև 3 մարզերի կտրվածքով դիտարկված բոլոր կայքերի առաջատար վարկանիշ ունեցող 6 կայքերը:

7. Ելնելով տեղեկատվական մատչելիության ամփոփիչ վարկանիշներից՝ համանքապետարանների կայքերը «որակական» հատկանիշով դասակարգելու նպատակով յուրաքանչյուր մարզի համար իրականացվել է դիտարկված կայքերի խմբավորում՝ 5 խմբով (այն արտահայտված է հավելված N3-ում)՝

- **ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ԿԱՅՔԵՐ**, որոնք բուն մոնիտորինգի ընթացքում ապահովել են տեղեկությունների ամբողջականության բարձր աստիճան՝ 79-100%,
- **ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԻ ԿԱՅՔԵՐ**, որոնք բուն մոնիտորինգի ընթացքում ապահովել են տեղեկությունների ամբողջականության միջինից բարձր աստիճան՝ 56-78%,
- **ԵՐՐՈՐԴ ԽՄԲԻ ԿԱՅՔԵՐ**, որոնք բուն մոնիտորինգի ընթացքում ապահովել են տեղեկությունների ամբողջականության միջին աստիճան՝ 34-55 %,
- **ՉՈՐՐՈՐԴ ԽՄԲԻ ԿԱՅՔԵՐ**, որոնք բուն մոնիտորինգի ընթացքում ապահովել են տեղեկությունների ամբողջականության ցածր աստիճան՝ 11-22 %,
- **ՀԻՆԳԵՐՈՐԴ ԽՄԲԻ ԿԱՅՔԵՐ**, որոնք բուն մոնիտորինգի ընթացքում ապահովել են տեղեկությունների ամբողջականության խիստ ցածր աստիճան՝ 0-11 %:

5. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ, ՇԻՐԱԿԻ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԵՐԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

5.1. Դիտարկված կայքերը

ՀՀ Գեղարքունիքի, Շիրակի և Սյունիքի մարզերում կան 320 համայնքներ, այդ թվում՝

N	Մարզը	Քաղաքներ	Գյուղեր	Ընդամենը
1	Գեղարքունիք	5	87	**92**
2	Շիրակ	3	116	**119**
3	Սյունիք	7	102	**109**
	Ընդամենը	**15**	**305**	**320**

Նշված 320 համայնքներից, սակայն, համայնքապետարանի կայք ունեն մոտ 22-25%-ը:

Համայնքապետարանների կայքերը իրավական առումով կարող ենք պաշտոնական համարել, եթե ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թ. ապրիլի 8-ի N280-Ա հրամանի համաձայն՝ ընդունել են քաղաքապետարանի/ գյուղապետարանի պաշտոնական կայքի վարման կարգ:

Մյուս կողմից՝ օրենսդրորեն սահմանված չէ «համայնքային պաշտոնական համացանցային կայք» հասկացությունը, որի վերաբերյալ ՀՀ կառավարության 2014 թ. մարտի 19-ի նիստի N11 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության տեղեկատվայնացման և տեղական տեղեկատվական հասարակության զարգացման քաղաքականության հայեցակարգի» «Առաջարկություններ» բաժնի 6.1. «Օրենսդրություն» ենթաբաժնում առաջարկվել է. «Մշակել և **օրենսդրորեն սահմանել համայնքային պաշտոնական համացանցային կայքի հասկացությունը**, չափորոշիչները, բովանդակության, գործառնական հնարավորությունների և վարման կարգի վերաբերյալ պահանջները»: Սակայն այս առաջարկությունը դեռևս օրենսդրորեն իր լուծումը չի ստացել, ինչը շատ կարևոր է ՏԻՄ ոլորտի տեղեկատվայնացման և թափանցիկության ու հրապարակայնության պահանջների ապահովման առումով:

Մեր դիտարկումների ընթացքում նկատելի էր նաև, որ կան համայնքներ, որոնք ունեն պաշտոնական համարվող համայնքային կառավարման տեղեկատվական համակարգեր (ՀԿՏՀ), սակայն զգալի թվով ՏԻՄ-երի կողմից դեռևս չեն ընդունվել ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թ. ապրիլի 8-ի N280-Ա հրամանով հաստատված քաղաքապետարանի/գյուղապետարանի պաշտոնական կայքի վարման կարգ:

Այս առումով մեր առջև դրվեց խնդիր՝ դիտարկման ենթարկել միայն վարման կարգ հաստատած համայնքապետարանների կայքե՞րը, թե՞ դիտարկման շրջանակում ընդգրկել ավելի շատ թվով համայնքապետարանների կայքեր՝ ելնելով այն մոտեցումից, որ յուրաքանչյուր անձ, ով ցանկանում է ստանալ իրեն անհրաժեշտ տեղեկությունը որևէ համայնքապետարանի կայք այցելելով՝ պարտավոր չէ ճշտել, թե ի՞նչ իրավական կարգավիճակ ունի իր այցելած կայքը կամ գործող օրենսդրությամբ ինչպե՞ս է կարգավորվում ՏԻՄ ոլորտում համացանցային տեղեկատվական մատչելիությունը:

ՀՀ կառավարության 2014թ. մարտի 19-ի N11 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության տեղեկատվայնացման և տեղական տեղեկատվական հասարակության զարգացման քաղաքականության հայեցակարգից բխող միջոցառումների ժամանակացույ-

ցի»[21] 10-րդ կետով տեղեկատվական համակարգերի լիարժեք և անխափան շահագործման ապահովման, վերահսկողության մակարդակի բարձրացման նպատակով 2015թ-ի մայիսի երկրորդ տասնօրյակում ՏԻՄ-երում շահագործվող կառավարման տեղեկատվական համակարգերի գրանցամատյան ստեղծելու և վարելու պատասխանատու մարմիններն են ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը և մարզպետարանները: Մեր հարցումների և ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ գրանցամատյան չի ստեղծվել, ինչն ավելի դյուրին կդարձներ մեր կողմից դիտարկման օբյեկտ հանդիսացող կայքերի ցանկի կազմումը:

Ելնելով վերոշարադրյալից՝ Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի կողմից դիտարկվել են Գեղարքունիքի, Շիրակի և Սյունիքի մարզերի համայնքների համացանցային հետևյալ կայքերը՝

1. ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության պաշտոնական կայքում աղյուսակի տեսքով տեղադրված համացանցային կայքերը՝ հղում՝ http://www.mtaes.am/files/docs/575.pdf[22] ,

2. քաղաքապետարանի/գյուղապետարանի պաշտոնական կայքի վարման կարգ ընդունած համայնքների համացանցային կայքերը,

3. կարգ չընդունած, բայց ՀԿՏՀ շահագործող և որպես պաշտոնական կայք գործարկվող համայնքային կայքերը:

Նկատենք, որ «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ի www.infosys.am կայքում 3 մարզերի կտրվածքով գրանցված համայնքային կայքերի թիվն անհամեմատ մեծ է՝ 136: Գրանցված են Գեղարքունիքի մարզի 36, Շիրակի մարզի 53, Սյունիքի մարզի 47 համայնքային կայքեր, սակայն առկա են այդ կայքերի հասանելիության հետ կապված խնդիրներ, որոնք են՝

1. գրանցված գգալի թվով կայքեր չեն բացվում և ընդհանրապես հասանելի չեն,

2. որոշ կայքեր հազվադեպ են բացվում և գրեթե տեղեկություններ չեն ներառում,

3. որոշ կայքեր չեն ապահովում պաշտոնական կայքի 24-ժամյա, շաբաթական 7 օր հասանելիությունը՝ հասանելի են միայն աշխատանքային որոշակի ժամերի ընթացքում և հասանելի չեն ոչ աշխատանքային օրերին:

ՀԿՏՀ կայքերի հասանելիությունը գնահատելու համար մեր կողմից յուրաքանչյուր մարզի կտրվածքով կատարվեցին դիտարկումներ: Այդ առումով մշակվեց դիտարկումների մեխանիզմ, համաձայն որի 1 շաբաթվա յուրաքանչյուր օրվա 3 տարբեր՝ 0-8, 8-16, 16-24 ժամային հատվածների ընթացքում իրականացվեցին գրանցված բոլոր կայքերի հաճախումներ՝ պարզելու համար՝ հասանելի՞ է յուրաքանչուր կայքը, թե՞ ոչ: Դիտարկումների արդյունքներով պարզ դարձավ, որ 3 մարզերի կտրվածքով հասանելի է 136 համայնքային կայքերի գրեթե կեսը և, ինչպես վերը նշվեց, առկա են նաև մի շարք համայնքապետարանների կայքեր, որոնք գրեթե տեղեկություններ չեն պարունակում: Որոշվեց վերը թվարկված 3 խմբի համայնքապետարանների կայքերից դիտարկման համար ընտրել միայն այն կայքերը, որոնք պարունակում են որոշակի տեղեկություններ, թեև դժվար հասանելի են:

Այսպիսով, առցանց ռեժիմով դիտարկման համար ընտրվեցին 3 մարզերի ընդհանուր թվով 69 համայնքապետարանների պաշտոնական կայքեր՝

N	Մարզը	Քաղաքներ	Գյուղեր	Ընդամենը
1	Գեղարքունիք	5	21	**26**
2	Շիրակ	3	21	**24**
3	Սյունիք	6	13	**19**
	Ընդամենը	**14**	**55**	**69**

21. ՀՀ կառավարության 2014թ. մարտի 19-ի N11 արձանագրային որոշում: Հավելված 2:
22. Ցանկ ՀՀ համայնքապետարանների համացանցային կայքերի՝ http://www.mtaes.am/files/docs/575.pdf:

Հավելենք, որ դիտարկված կայքերից 67-ը ՀԿՏՀ շահագործող են, տիպային կայքեր են, բացառությամբ Գավառի և Գյումրու քաղաքապետարանների կայքերի, որոնք այլ, ոչ տիպային կայքեր են: Գավառի քաղաքապետարանը գործարկում է նաև ՀԿՏՀ համայնքային կայքը, սակայն այն չի դիտարկվել, քանի որ Գավառ համայքի ղեկավարի 2015 թվականի օգոստոսի 17-ի N155-Ա «Գավառի քաղաքապետարանի պաշտոնական կայքի վարման կարգը հաստատելու և կայքի պատասխանատու նշանակելու մասին» որոշմամբ պաշտոնական է հանդիսանում gavariqaghaqapetaran.am կայքը:

Այսպիսով, ստորև՝ N1, N2 և N3 աղյուսակներով ներկայացվում են դիտարկված կայքերը՝ ըստ մարզերի:

Աղյուսակ N1. ՀՀ Գեղարքունիքի մարզի քաղաքապետարանների և գյուղապետարանների դիտարկված պաշտոնական համացանցային կայքեր

N	Համայնքը	Կայքի հասցեն
1	ք. Գավառ	http:www.gavariqaghaqapetaran.am
2	ք. Ճամբարակ	http://chambarak.am
3	ք. Մարտունի	http://martunihamaynq.am
4	ք. Սևան	http://sevan.city.am
5	ք. Վարդենիս	http://vardenis.am
6	գ. Գեղամասար	http://212.42.201.98
7	գ. Գեղամավան	http://46.19.101.29
8	գ. Գեղհովիտ	http://130.193.123.108
9	գ. Դդմաշեն	http://ddmashen.am
10	գ. Երանոս	http://yeranos.am
11	գ. Զովաբեր	http://zovaber.am
12	գ. Թթուջուր	http://46.130.52.157
13	գ. Լիճք	http://46.130.48.89
14	գ. Լճաշեն	http://46.130.63.230
15	գ. Լուսակունք	http://212.42.201.99
16	գ. Ծաղկունք	http://46.130.63.215
17	գ. Ծովագյուղ	http://tsovagyugh.am
18	գ. Կարմիրգյուղ	http://karmirgyugh.am
19	գ. Ձորագյուղ	http://130.193.123.118
20	գ. Ներքին Գետաշեն	http://46.130.50.237
21	գ. Նորատուս	http://noratus.am
22	գ. Սարուխան	http://130.193.121.178
23	գ. Վահան	http://vahanvillage.am
24	գ. Վաղաշեն	http://vaghashen.am
25	գ. Վարդենիկ	http://vardenik.am
26	գ. Վարսեր	http://varser.am

Աղյուսակ N2. ՀՀ Շիրակի մարզի քաղաքապետարանների և գյուղապետարանների դիտարկված պաշտոնական համացանցային կայքեր

N	Համայնքը	Կայքի հասցեն
1	ք. Արթիկ	http://www.artik.am
2	ք. Գյումրի	http://www.gyumricity.am
3	ք. Մարալիկ	http://maralik.am/
4	գ. Ազատան	http://azatan.am
5	գ. Ախուրյան	http://akhuryan.am
6	գ. Այգաբաց	http://aygabats.am
7	գ. Անուշավան	http://www.anushavan.am
8	գ. Աշոցք	http://87.241.168.6
9	գ. Առափի	http://46.130.51.168
10	գ. Արեգնադեմ	http://46.130.51.49
11	գ. Արևիկ	http://195.8.51.84/
12	գ. Արևշատ	http://arevshat.am
13	գ. Բասեն	http://basen.am/
14	գ. Գեղանիստ	http://217.113.3.81/
15	գ. Գետափ	http://getap-shirak.am/
16	գ. Հայրենյաց	http://hayrenyac.am/
17	գ. Հացիկ	http://46.130.54.216/
18	գ. Հոռոմ	http://horom.am/
19	գ. Ձորակապ	http://dzorakap.am
20	գ. Մեղրաշեն	http://meghrashen.am/
21	գ. Նահապետավան	http://nahapetavan.am/
22	գ. Ջաջուռ	http://46.130.52.228/
23	գ. Սառնաղբյուր	http://sarnaghbyur.am
24	գ. Սարալանջ	http://saralanj.am/

Աղյուսակ N3. ՀՀ Սյունիքի մարզի քաղաքապետարանների և գյուղապետարանների դիտարկված պաշտոնական համացանցային կայքեր

N	Համայնքը	Կայքի հասցեն
1	ք. Ագարակ	http://agarak.am/
2	ք. Գորիս	http://goriscity.am/
3	ք. Կապան	http://kapan.am/
4	ք. Մեղրի	http://meghri.am/
5	ք. Սիսիան	http://sisian.am/
6	ք. Քաջարան	http://kajaran.am/
7	գ. Ալվանք	http://46.130.50.121/
8	գ. Բռնակոթ	http://brnakot.am/
9	գ. Գորայք	http://46.130.113.211/
10	գ. Լեհվազ	http://188.115.210.9/
11	գ. Լեռնածոր	http://46.130.52.103/
12	գ. Հարթաշեն	http://185.8.1.14/
13	գ. Հալիձոր	http://87.241.171.192/
14	գ. Շաքի	http://91.205.136.68/
15	գ. Շինուհայր	http://185.8.1.11/
16	գ. Վարդանիձոր	http://188.115.210.8/
17	գ. Վերիշեն	http://130.193.124.220:904/
18	գ. Տոլորս	http://91.205.136.206/
19	գ. Քարահունջ	http://185.8.1.7/

5.2. Պաշտոնական համացանցային կայքի վարման կարգի հաստատումը համայնքապետարանների կողմից

ՀՀ կառավարության 2014թ.-ի մարտի 19-ի թիվ 11 արձանագրային որոշման «ՀՀ-ում ՏԻՄ գործունեության տեղեկատվայնացման և տեղական տեղեկատվական հասարակության զարգացման քաղաքականության հայեցակարգից բխող միջոցառումների ժամանակացույցի» 4-րդ կետի համաձայն՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության վրա է դրված համայնքային պաշտոնական համացանցային կայքերի վարման օրինակելի կարգի մշակման և ՏԻՄ-ին տրամադրելու պատասխանատվությունը, որը ենթակա է կատարման 2015թ.-ի ապրիլ ամսվա առաջին-երկրորդ տասնօրյակներում:

Այս առումով կարող ենք փաստել, որ համայնքային պաշտոնական համացանցային կայքերի վարման օրինակելի կարգը նախարարության կողմից ժամանակին հաստատվել է: Կարգի՝ ՏԻՄ-երին տրամադրելու վերաբերյալ մեր կողմից հարցում է հղվել նախարարությանը: Ըստ նախարարության աշխատակազմի ղեկավարի 29.09.2015թ.-ի պատասխան գրության՝ «կարգը մարզպետների միջոցով փոխանցվել է ՀՀ համայնքներին՝առաջարկելով բոլոր այն համայնքներին, որոնք ունեն պաշտոնական համացանցային կայքեր (անկախ՝ կայքը ՀԿՏՀ է, թե ոչ), հիմք ընդունելով այն, մշակել և սեփական իրավական ակտերով հաստատել իրենց համայնքների պաշտոնական համացանցային կայքերի վարման կարգերը»:

Համայնքային պաշտոնական համացանցային կայքերի վարման կարգի հաստատման վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերելու նպատակով ուսումնասիրվել են դիտարկման համար ընտրված համայնքապետարանների կայքերը, յուրաքանչյուր համայնքի համար ընդլայնված որոնում է իրականացվել նաև Գուգլ (Google) որոնողական համակարգով, ինչպես նաև տեղեկատվություն ստանալու վերաբերյալ 2015թ.-ի օգոստոս-նոյեմբեր ամիսներին հարցումներ են հղվել ընդհանուր թվով 48 համայնքապետարանների:

Ըստ այդմ՝ առ 30.12.2015թ. դրությամբ 3 մարզերի կտրվածքով պաշտոնական համացանցային կայքի վարման կարգ հաստատվել է 36 համայնքապետարանների կողմից՝ Գեղարքունիքի մարզում՝ 17, Շիրակի մարզում՝ 18, Սյունիքի մարզում՝ 1: Նկատենք, որ 3 մարզերի կտրվածքով պաշտոնական համացանցային կայքի վարման կարգ հաստատել է 320 համայնքներից 11,25%-ը:

Վերոնշված համայնքներից, սակայն, շատ քչերն են համապատասխան որոշումները տեղադրել իրենց կայքերում: Հաճախ հանդիպող թերացում է այն, որ որոշումներում նշված հավելվածները կայքերում չեն տեղադրվել:

Այսպես, Գեղարքունիքի մարզի համայնքապետարաններից համապատասխան որոշումը տեղադրվել է 12 համայնքների կողմից, սակայն որոշումները կից հավելվածներով տեղադրվել են միայն 10 համայնքների կողմից (ներկայացված է ստորև՝ N4 աղյուսակով): Հարկ է նշել, որ Մարտունու քաղաքային համայնքի ղեկավարի կողմից հաստատված կարգը չի համապատասխանում ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թ. ապրիլի 8-ի N280-Ա հրամանով հաստատված օրինակելի կարգի պահանջներին:

Շիրակի մարզի համայնքապետարաններից համապատասխան որոշումը տեղադրվել է 6 համայնքների կողմից, սակայն որոշումները կից հավելվածներով տեղադրվել են միայն 4 համայնքների կողմից (ներկայացված է ստորև՝ N5 աղյուսակով):

Սյունիքի մարզի համայնքապետարաններից որոշումը և կից հավելվածը տեղադրվել է միայն Ագարակի համայնքպետարանի կողմից (ներկայացված է ստորև՝ N6 աղյուսակով): Մեղրի համայնքի ղեկավարի 22.04.2015թ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N74Ա որոշմամբ հաստատվել է Մեղրիի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին գործավարության կարգը:

Աղյուսակ N4. ՀՀ Գեղարքունիքի մարզի համացանցային կայքի վարման կարգ հաստատած համայնքներ

N	Համայնքը	Որոշման ընդունման ամսաթիվը և համարը	Տեղադրվե՞լ է կայքում (այո/ոչ)
1	ք. Գավառ	17.08.2015թ., N155-Ա	Այո[23]
2	ք. Ճամբարակ	04.08.2015թ., N142	Այո
3	ք. Մարտունի	05.05.2015թ., N159	Այո
4	ք. Սևան	15.04.2015թ, N116-Ա	Այո
5	ք. Վարդենիս	10.08.2015թ., N175-Ա	Այո
6	գ. Դդմաշեն	30.04.2015թ., N30	Այո
7	գ. Երանոս	25.08.2015թ., N28	Այո
8	գ. Լճաշեն	02.06.2015թ., N50	Այո
9	գ. Ծաղկունք	02.07.2015թ., N16	Որոշումը տեղադրվել է, կարգը՝ ոչ:
10	Ծովագյուղ	01.12.2015թ., N91-Ա	Ոչ
11	գ. Ներքին Գետաշեն	14.07.2015թ., N40	Ոչ
12	գ. Նորատուս	13.07.2015թ., N26	Որոշումը տեղադրվել է, կարգը՝ ոչ:
13	գ. Սարուխան	01.09.2015թ., N22[24]	Ոչ
14	գ. Վահան	15.05.2015թ., N31-Ա	Այո
15	գ. Վաղաշեն	02.06.2015թ., N23-Ա	Այո
16	գ. Վարդենիկ	21.07.2015թ., N23	Ոչ
17	գ. Վարսեր	02.11.2015թ., N29-Ա	Ոչ

Աղյուսակ N5. ՀՀ Շիրակի մարզի համացանցային կայքի վարման կարգ հաստատած համայնքներ

N	Համայնքը	Որոշման ընդունման ամսաթիվը և համարը	Տեղադրվե՞լ է կայքում (այո/ոչ)
1	ք. Արթիկ	16.09.2015թ., N364-Ա	Որոշումը տեղադրվել է, կարգը՝ ոչ:
2	ք. Գյումրի	04.08.2015, N1444	Ոչ
3	ք. Մարալիկ	14.05.2015, N 66	Ոչ
4	գ. Ազատան	Ընդունման օրը և համարը պատասխանում չեն նշվել:	Ոչ
5	գ. Ախուրյան	22.06.2015, N39-Ա	Որոշումը տեղադրվել է, կարգը՝ ոչ:
6	գ. Այգաբաց	21.05.2015թ., N10	Այո
7	գ. Անուշավան	13.07.2015, N33	Այո
8	գ. Աշոցք	18.09.2015թ., համարը պատասխանում չի նշվել:	Ոչ
9	գ. Առափի	02.09.2015, N15-Ա	Որոշումը տեղադրվել է, կարգը՝ ոչ:
10	գ. Արեգնադեմ	30.01.2015թ., ավագանու N04 որոշում	Ոչ
11	գ. Արևիկ	12.05.2015թ., N7	Ոչ
12	գ. Արևշատ	18.08.2015թ., N14	Ոչ
13	գ. Գետափ	17.10.2015թ., N16	Որոշումը տեղադրվել է, կարգը՝ ոչ:
14	գ. Հայրենյաց	Ընդունման օրը պատասխանում չի նշվել	Ոչ
15	գ. Ջորակապ	19.09.2015թ., N32-Ա	Այո
16	գ. Ջաջուռ	12.11.2015թ., N13	Որոշումը տեղադրվել է, կարգը՝ ոչ:
17	գ. Սառնաղբյուր	26.06.2015թ., N14	Ոչ
18	գ. Սարալանջ	13.05.2015թ., N1.1	Այո

23. Կարգը տեղադրված է «Այլ նորմատիվ ակտեր» ենթաբաժնում:
24. Կարգը հաստատվել է Սարուխանի համայնքի ղեկավարի կարգադրությամբ, մինչդեռ մնացած բոլոր համայնքների պարագայում կարգը հաստատվել է համայնքի ղեկավարների որոշումներով:

Աղյուսակ N6. ՀՀ Սյունիքի մարզի համացանցային կայքի վարման կարգ հաստատած համայնքներ

N	Համայնքը	Որոշման ընդունման ամսաթիվը և համարը	Տեղադրվե՞լ է կայքում (այո/ոչ)
1	ք. Ագարակ	08.05.2015թ., N94-Ա	Այո

Հարկ է նշել, որ մեր հարցումներին տրված պատասխանների ուսումնասիրման արդյունքում երևում է, որ շատ համայնքներում կարգը հիմնականում հաստատվել է մեր հարցումները ստանալուն նախորդող օրերին կամ դրանից հետո: Այսպես՝

- Գեղարքունիքի մարզի 2 համայնքների ղեկավարների և Շիրակի մարզի 8 համայնքների ղեկավարների կողմից կարգը հաստատվել է մեր հարցումները ստանալուց 4-7 օր առաջ,
- Շիրակի մարզի Արեգնադեմ համայնքի ավագանու կողմից կարգը հաստատվել է 2015թ.-ի հունվարին, երբ դեռ հաստատված չէր օրինակելի կարգը (հաստատվել է 08.04.2015թ.-ին),
- Գեղարքունիքի մարզի 6 համայնքների ղեկավարների և Շիրակի մարզի 5 համայնքների ղեկավարների կողմից կարգը հաստատվել է մեր հարցումները ստանալուց հետո:

5.3. Համայնքապետարանների մարդկային և մասնագիտական կարողությունները իրենց կայքերի շահագործման ոլորտում

Համայնքապետարանների կողմից պաշտոնական համացանցային կայքի վարումը մեծապես կախված է ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետող մասնագետների առկայությունից:

ՀՀ կառավարության 2014թ. մարտի 19-ի N11 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության տեղեկատվայնացման և տեղական տեղեկատվական հասարակության զարգացման քաղաքականության հայեցակարգը»[25] ներառում է այս ոլորտի ընթացիկ վիճակի նկարագիրը և առկա հիմնական խնդիրները: Մասնավորապես, ինչպես նշված է հայեցակարգում. «Համայնքային ծառայողների գիտելիքների և ունակությունների վերաբերյալ պահանջները ամրագրված են համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերում: Թեև նշված անձնագրերի և՛ օրինակելի ձևերը[26], և՛ բոլոր հաստատված անձնագրերը պարունակում են պաշտոն զբաղեցնելու համար համայնքային ծառայողին ներկայացվող **համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակության** վերաբերյալ պահանջներ, սակայն, դիտարկումները և ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հատկապես ավագ տարիքի, ինչպես նաև գյուղական համայնքների համայնքային ծառայողների մեծ մասը չունեն համապատասխան հմտություններ կամ դրանք բավարար չեն: Բացի այդ, հստակեցված չէ, թե որն է համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակության սահմանը և ինչ չափանիշներով են դրանք գնահատվում»:

Հայեցակարգի վերոնշված՝ «ՏԻՄ-երի մարդկային և մասնագիտական ներուժը» 5.4-րդ ենթաբաժնում նշվում է նաև, որ ՏԻՄ-երում կիրառվող տեղեկատվական համակարգերի ուսուցման և վերապատրաստման գործընթացը կանոնակարգված չէ:

25. ՀՀ կառավարության 2014թ. մարտի 19-ի ? 11 արձանագրային որոշում: Հավելված 1. «5.4 ՏԻՄ-երի մարդկային և մասնագիտական ներուժը»:
26. ՀՀ տարածքային կառավարման նախարարության պաշտոնական համացանցային կայքը: http://www.mta.gov.am/hy/method-mater-clarificatications/:

Կարևոր հարց է նաև ուսուցման և վերապատրաստման գործընթացի ֆինանսավորումը: Այս հարցի առնչությամբ հայեցակարգում նշվում է. «Վերապատրաստման դասընթացները հիմնականում կազմակերպվում են ՀՀ պետական բյուջեի միջոցներով կամ միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված դրամաշնորհների հաշվին: ՏԻՄ-երը դեռևս հակված չեն իրենց մասնագետներին վերապատրաստելու նպատակով **համայնքային բյուջեներից հատկացումներ կատարել»**:

Ելնելով վերոշարադրյալից՝ կարող ենք փաստել, որ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թ. ապրիլի 8-ի N280-Ա հրամանով պարտադրվում է Կարգի ընդունումը, սակայն դրա կատարմանն ուղղված միջոցառումներ և վերահսկողություն չի սահմանվում, այդ թվում և՝ ուսուցման և վերապատրաստման գործընթացի կանոնակարգումը:

Համաձայն համայնքներից ստացված պաշտոնական գրությունների՝ կայքերի պատասխանատուներ հիմնականում հանդիսանում են համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը և/կամ համակարգչային օպերատորը:

Ի պատասխան մեր հարցմանը՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության նախաձեռնությամբ 2014թ. և 2015թ. ինն ամիսների ընթացքում «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ի կողմից Գեղարքունիքի, Շիրակի և Սյունիքի մարզերից ՀԿՏՀ ուսուցման և վերապատրաստման դասընթացներին մասնակցել են ընդհանուր թվով 130 մասնագետներ (ներկայացված է ենթաբաժնի վերջում՝ N7 աղյուսակով):

Մեր դիտարկումների արդյունքում 2014թ. և 2015թ. ինն ամիսների ընթացքում ՀԿՏՀ ուսուցման և վերապատրաստման դասընթացներին մասնակցած համայնքապետարաններից պաշտոնական համացանցային կայքի վարման կարգ են հաստատել և համակարգը որպես պաշտոնական կայք են գործարկում՝

- Գեղարքունիքի մարզում՝ Սևան քաղաքային, Վաղաշեն և Ծովագյուղ գյուղական համայնքերը,
- Շիրակի մարզում՝ Արթիկ, Մարալիկ քաղաքային, Այգաբաց, Արեգնադեմ, Հայրենյաց, Ջաջուռ, Սարալանջ գյուղական համայնքները,
- Սյունիքի մարզում՝ Ագարակ համայնքը:

Աղյուսակ N7. ՀՀ Գեղարքունիքի, Շիրակի և Սյունիքի մարզերից վերապատրաստված մասնագետների քանակական տվյալներ

N	Մարզ	Համայնք	Ուսուցանված մասնագետների թիվը	
			2014	2015
1	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	Դրախտիկ	2	
2		Արտանիշ	2	
3		Փոքր Մասրիկ	3	
4		Հայրավանք	2	
5		Շատջրեք	2	1
6		Այգուտ	2	
7		Կարճաղբյուր	1	
8		Ծափաթաղ	1	
9		Վաղաշեն		6
10		Ծովագյուղ		6
11		Սևան		2
	Ընդամենը		**15**	**15**

N	Մարզ	Համայնք	Ուսուցանված մասնագետների թիվը	
			2014	2015
1	ՇԻՐԱԿ	Արթիկ	1	
2		Ջրափի	3	
3		Հոռոմ	2	
4		Գոգհովիտ	2	
5		Մարալիկ	1	1
6		Գեղանիստ	1	
7		Սարալանջ	1	
8		Այգաբաց	3	
9		Արեգնադեմ	3	
10		Շիրակավան	2	
11		Հովիտ	5	
12		Հայկաձոր	3	
14		Փոքր Մանթաշ	3	
15		Հայրենյաց	3	2
16		Մեծ Սեպասար	2	
17		Իսահակյան	6	
18		Քեթի	4	
19		Արևիկ		2
20		Գետք		6
21		Պեմզաշեն		4
22		Լեռնուտ		1
23		Ջաջուռ		4
	Ընդամենը		**45**	**21**
1	ՍՅՈՒՆԻՔ	Լեռնաձոր	3	
2		Սյունիք	3	
3		Վարդանիձոր	3	1
4		Լեհվազ	3	
5		Մեղրի	2	
6		Ագարակ		1
7		Քարահունջ		1
8		Ակներ		1
9		Տաթև		1
10		Շինուհայր		2
11		Հալիձոր		2
12		Գորայք		5
13		Սառնակունք		2
14		Վերիշեն		1
15		Գորիս		2
16		Ալվանք		1
	Ընդամենը		**14**	**20**

5.4. Տեղեկատվական մատչելիության վարկանիշները

ՀՀ կառավարության 2014 թ. մարտի 19-ի նիստի N11 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության տեղեկատվայնացման և տեղական տեղեկատվական հասարակության զարգացման քաղաքականության հայեցակարգի» «Առաջարկություններ» բաժնի 6.1. «Օրենսդրություն» ենթաբաժնում առաջարկվել է. «Օրենսդրորեն սահմանել ՏԻՄ-երի կողմից համայնքային պաշտոնական համացանցային կայքերի պարտադիր վարման պահանջը և կայքերում պարտադիր հրապարակման ենթակա իրավական ակտերի ու տեղեկությունների ցանկը»:

Այս առաջարկության առնչությամբ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թ. ապրիլի 8-ի N280-Ա հրամանով հաստատվել է ՀՀ համայնքային պաշտոնական համացանցային կայքերի վարման օրինակելի կարգը, որով սահմանվել են պարտադիր հրապարակման ենթակա օրենսդրությամբ սահմանված իրավական ակտերը, տեղեկությունները և նյութերը:

Մեր կողմից դիտարկվելիք կայքերի բովանդակության հետազոտության և վերլուծության համար կազմվել են համապատասխան դիտարկման աշխատանքային աղյուսակներ ըստ մարզերի, իրականացվել է գնահատում ըստ մշակված մեթոդաբանության[27]:

Այս մեթոդաբանությամբ ուսումնասիրելով ՀՀ Գեղարքունիքի, Շիրակի և Սյունիքի մարզերի համայնքապետարանների համացանցային պաշտոնական կայքերը և հաշվելով դրանցում տեղեկատվական մատչելիության աստիճանը՝ ստացանք հետևյալ վարկանիշային աղյուսակները, որոնք ներկայացվում են ըստ մարզերի (տե՛ս ստորև՝ N8, N9, N10 աղյուսակներով):

Աղյուսակ N8. ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքապետարանների պաշտոնական համացանցային կայքերի վարկանիշերը

N	Համայնքը	Կայքի հասցեն	Տեղեկատվական մատչելիության գործակիցը՝ միավոր	Տեղեկատվական մատչելիության աստիճանը՝ %
1	ք. Գավառ	http:www.gavariqaghaqapetaran.am	202	70,14%
2	ք. Ճամբարակ	http://chambarak.am	85	29,51%
3	ք. Մարտունի	http://martunihamaynq.am	52	18,06%
4	ք. Սևան	http://sevan.city.am	256	88,89%
5	ք. Վարդենիս	http://vardenis.am	75	26,04%
6	գ. Գեղամասար	http://212.42.201.98	58	20,14%
7	գ. Գեղամավան	http://46.19.101.29	64	22,22%
8	գ. Գեղհովիտ	http://130.193.123.108	38	13,19%
9	գ. Դդմաշեն	http://ddmashen.am	81	28,13%
10	գ. Երանոս	http://yeranos.am	112	38,89%
11	գ. Զովաբեր	http://zovaber.am	105	36,46%
12	գ. Թթուջուր	http://46.130.52.157	56	19,44%
13	գ. Լիճք	http://46.130.48.89	32	11,11%
14	գ. Լճաշեն	http://46.130.63.230	75	26,04%
15	գ. Լուսակունք	http://212.42.201.99	29	10,07%
16	գ. Ծաղկունք	http://46.130.63.215	70	24,31%
17	գ. Ծովագյուղ	http://tsovagyugh.am	41	14,24%
18	գ. Կարմիրգյուղ	http://karmirgyugh.am	75	26,04%
19	գ. Ջորագյուղ	http://130.193.123.118	31	10,76%
20	գ. Ներքին Գետաշեն	http://46.130.50.237	43	14,93%
21	գ. Նորատուս	http://noratus.am	172	59,72%
22	գ. Սարուխան	http://130.193.121.178	58	20,14%
23	գ. Վահան	http://vahanvillage.am	127	44,10%
24	գ. Վաղաշեն	http://vaghashen.am	102	35,42%
25	գ. Վարդենիկ	http://vardenik.am	98	34,03%
26	գ. Վարսեր	http://varser.am	58	20,14%

27. Տես սույն զեկույցի «4.4. Մոնիտորինգի իրականացման մեթոդաբանությունը» ենթաբաժինը:

Աղյուսակ N9. ՀՀ Շիրակի մարզի համայնքապետարանների պաշտոնական համացանցային կայքերի վարկանիշերը

N	Համայնքը	Կայքի հասցեն	Տեղեկատվական մատչելիության գործակիցը՝ միավոր	Տեղեկատվական մատչելիության աստիճանը՝ %
1	ք. Արթիկ	http://www.artik.am	115	39,93%
2	ք. Գյումրի	http://www.gyumricity.am	205	71,18%
3	ք. Մարալիկ	http://maralik.am/	101	35,07%
4	գ. Ազատան	http://azatan.am	61	21,18%
5	գ. Ախուրյան	http://akhuryan.am	66	22,92%
6	գ. Այգաբաց	http://aygabats.am	93	32,29%
7	գ. Անուշավան	http://www.anushavan.am	52	18,06%
8	գ. Աշոցք	http://87.241.168.6	65	22,57%
9	գ. Առափի	http://46.130.51.168	66	22,92%
10	գ. Արեգնադեմ	http://46.130.51.49	55	19,10%
11	գ. Արևիկ	http://195.8.51.84/	51	17,71%
12	գ. Արևշատ	http://arevshat.am	49	17,01%
13	գ. Բասեն	http://basen.am/	46	15,97%
14	գ. Գեղանիստ	http://217.113.3.81/	31	10,76%
15	գ. Գետափ	http://getap-shirak.am/	32	11,11%
16	գ. Հայրենյաց	http://hayrenyac.am/	52	18,06%
17	գ. Հացիկ	http://46.130.54.216/	45	15,13%
18	գ. Հոռոմ	http://horom.am/	55	19,10%
19	գ. Ձորակապ	http://dzorakap.am	61	21,18%
20	գ. Մեղրաշեն	http://meghrashen.am/	81	28,13%
21	գ. Նահապետավան	http://nahapetavan.am/	77	26,74%
22	գ. Ջաջուռ	http://46.130.52.228/	60	20,83%
23	գ. Սառնաղբյուր	http://sarnaghbyur.am	57	19,79%
24	գ. Սարալանջ	http://saralanj.am/	31	10,76%

Աղյուսակ N10. ՀՀ Սյունիքի մարզի համայնքապետարանների պաշտոնական համացանցային կայքերի վարկանիշները

N	Համայնքը	Կայքի հասցեն	Տեղեկատվական մատչելիության գործակիցը՝ միավոր	Տեղեկատվական մատչելիության աստիճանը՝ %
1	ք. Ագարակ	http://agarak.am/	156	54,17%
2	ք. Գորիս	http://goriscity.am/	151	52,43%
3	ք. Կապան	http://kapan.am/	194	67,36%
4	ք. Մեղրի	http://meghri.am/	149	51,74%
5	ք. Սիսիան	http://sisian.am/	145	50,35%
6	ք. Քաջարան	http://kajaran.am/	142	49,31%
7	գ. Ալվանք	http://46.130.50.121/	65	22,57%
8	գ. Բռնակոթ	http://brnakot.am/	68	23,61%
9	գ. Գորայք	http://46.130.113.211/	50	17,36%
10	գ. Լեհվազ	http://188.115.210.9/	69	23,96%
11	գ. Լեռնաձոր	http://46.130.52.103/	50	17,36%
12	գ. Հարթաշեն	http://185.8.1.14/	70	24,31%
13	գ. Հալիձոր	http://87.241.171.192/	74	25,69%
14	գ. Շաքի	http://91.205.136.68/	80	27,78%
15	գ. Շինուհայր	http://185.8.1.11/	69	23,96%
16	գ. Վարդանիձոր	http://188.115.210.8/	84	29,17%
17	գ. Վերիշեն	http://130.193.124.220:904/	64	22,22%
18	գ, Տոլորս	http://91.205.136.206/	71	24,65%
19	գ. Քարահունջ	http://185.8.1.7/	87	30,21%

Ելնելով տեղեկատվական մատչելիության ամփոփիչ վարկանիշներից՝ առանձնացվել են 3 մարզերի առաջատար վարկանիշ ունեցող 6-ական համայնքային պաշտոնական համացանցային կայքերը, որոնք ներկայացվում են ստորև՝ N11, N12, N13 աղյուսակներով:

Աղյուսակ N11. ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջատար վարկանիշ ունեցող 6 համայնքային պաշտոնական համացանցային կայքերը

N	Համայնքը	Կայքի հասցեն	Տեղեկատվական մատչելիության գործակիցը՝ միավոր	Տեղեկատվական մատչելիության աստիճանը՝ %
1	ք. Սևան	http://sevan.city.am	256	88,89%
2	ք. Գավառ	http:www.gavariqaghaqapetaran.am	202	70,14%
3	գ. Նորատուս	http://noratus.am	172	59,72%
4	գ. Վահան	http://vahanvillage.am	127	44,10%
5	գ. Երանոս	http://yeranos.am	112	38,89%
6	գ. Զովաբեր	http://zovaber.am	105	36,46%

Աղյուսակ N12. ՀՀ Շիրակի մարզի առաջատար վարկանիշ ունեցող 6 համայնքային պաշտոնական համացանցային կայքերը

N	Համայնքը	Կայքի հասցեն	Տեղեկատվական մատչելիության գործակիցը՝ միավոր	Տեղեկատվական մատչելիության աստիճանը՝ %
1	ք. Գյումրի	http://www.gyumricity.am	205	71,18%
2	ք. Արթիկ	http://www.artik.am	115	39,93%
3	ք. Մարալիկ	http://maralik.am/	101	35,07%
4	գ. Այգաբաց	http://aygabats.am	93	32,29%
5	գ. Մեղրաշեն	http://meghrashen.am/	81	28,13%
6	գ. Նահապետավան	http://nahapetavan.am/	77	26,74%

Աղյուսակ N13. ՀՀ Սյունիքի մարզի 6 առաջատար համայնքային պաշտոնական համացանցային կայքերը (վարկանիշային առաջատարները)

N	Համայնքը	Կայքի հասցեն	Տեղեկատվական մատչելիության գործակիցը՝ միավոր	Տեղեկատվական մատչելիության աստիճանը՝ %
1	ք. Կապան	http://kapan.am/	194	67,36%
2	ք. Ագարակ	http://agarak.am/	156	54,17%
3	ք. Գորիս	http://goriscity.am/	151	52,43%
4	ք. Մեղրի	http://meghri.am/	149	51,74%
5	ք. Սիսիան	http://sisian.am/	145	50,35%
6	ք. Քաջարան	http://kajaran.am/	142	49,31%

Դիտարկված կայքերը «որակական» հատկանիշով դասակարգելու նպատակով յուրաքանչյուր մարզի համար իրականացվել է նաև համայնքապետարանների համացանցային պաշտոնական կայքերի խմբավորում՝ 5 խմբով (տես հավելված N3)՝ ելնելով տեղեկատվական մատչելիության ամփոփիչ վարկանիշներից: Այդ տվյալները համապատասխանաբար ներկայացվում են ստորև՝ N14, N15, N16 աղյուսակներով:

Աղյուսակ N14. ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքապետարանների համացանցային պաշտոնական կայքերի խմբավորում ըստ ամփոփիչ վարկանիշների

ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ԿԱՅՔԵՐ	ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԻ ԿԱՅՔԵՐ	ԵՐՐՈՐԴ ԽՄԲԻ ԿԱՅՔԵՐ	ՉՈՐՐՈՐԴ ԽՄԲԻ ԿԱՅՔԵՐ	ՀԻՆԳԵՐՈՐԴ ԽՄԲԻ ԿԱՅՔԵՐ
Տեղեկությունների **ամբողջականության բարձր աստիճան՝ 79-100%**	Տեղեկությունների **ամբողջականության միջինից բարձր աստիճան՝ 56-78%**	Տեղեկությունների **ամբողջականության միջին աստիճան՝ 34-55%**	Տեղեկությունների **ամբողջականության ցածր աստիճան՝ 12-33 %**	Տեղեկությունների **ամբողջականության խիստ ցածր աստիճան 0-11 %**
ք. Սևան	ք. Գավառ գ. Նորատուս	գ. Երանոս գ. Զովաբեր գ. Վահան գ. Վաղաշեն գ. Վարդենիկ	ք. Ճամբարակ ք. Մարտունի ք. Վարդենիս գ. Գեղամասար գ. Գեղամավան գ. Գեղհովիտ գ. Դդմաշեն գ. Թթուջուր գ. Լճաշեն գ. Ծաղկունք գ. Ծովազարդ գ. Կարմիրգյուղ գ. Ն. Գետաշեն գ. Սարուխան գ. Վարսեր	գ. Լիճք գ. Լուսակունք գ. Ջորագյուղ

Աղյուսակ N15. ՀՀ Շիրակի մարզի համայնքապետարանների համացանցային պաշտոնական կայքերի խմբավորում ըստ ամփոփիչ վարկանիշների

ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ԿԱՅՔԵՐ	ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԻ ԿԱՅՔԵՐ	ԵՐՐՈՐԴ ԽՄԲԻ ԿԱՅՔԵՐ	ՉՈՐՐՈՐԴ ԽՄԲԻ ԿԱՅՔԵՐ	ՀԻՆԳԵՐՈՐԴ ԽՄԲԻ ԿԱՅՔԵՐ
Տեղեկությունների **ամբողջականության բարձր աստիճան՝ 79-100%**	Տեղեկությունների **ամբողջականության միջինից բարձր աստիճան՝ 56-78%**	Տեղեկությունների **ամբողջականության միջին աստիճան՝ 34-55%**	Տեղեկությունների **ամբողջականության ցածր աստիճան՝ 12-33 %**	Տեղեկությունների **ամբողջականության խիստ ցածր աստիճան 0-11 %**
	ք. Գյումրի	ք. Արթիկ ք. Մարալիկ	գ. Ազատան գ. Ախուրյան գ. Այգաբաց գ. Անուշավան գ. Աշոցք գ. Առափի գ. Արեգնադեմ գ. Արևիկ գ. Արևշատ գ. Բասեն գ. Հայրենյաց գ. Հացիկ գ. Հոռոմ գ. Ջորակապ գ. Մեղրաշեն գ. Նահապետավան գ. Ջաջուռ գ. Սառնաղբյուր	գ. Գեղանիստ գ. Գետափ գ. Սարալանջ

Աղյուսակ N16. ՀՀ Սյունիքի մարզի համայնքապետարանների համացանցային պաշտոնական կայքերի խմբավորում ըստ ամփոփիչ վարկանիշների

ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ԿԱՅՔԵՐ	ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԻ ԿԱՅՔԵՐ	ԵՐՐՈՐԴ ԽՄԲԻ ԿԱՅՔԵՐ	ՉՈՐՐՈՐԴ ԽՄԲԻ ԿԱՅՔԵՐ	ՀԻՆԳԵՐՈՐԴ ԽՄԲԻ ԿԱՅՔԵՐ
Տեղեկությունների **ամբողջականության բարձր աստիճան՝ 79-100%**	Տեղեկությունների **ամբողջականության միջինից բարձր աստիճան՝ 56-78%**	Տեղեկությունների **ամբողջականության միջին աստիճան՝ 34-55%**	Տեղեկությունների **ամբողջականության ցածր աստիճան՝ 12-33 %**	Տեղեկությունների **ամբողջականության խիստ ցածր աստիճան 0-11 %**
	ք. Կապան	ք. Ագարակ ք. Գորիս ք. Մեղրի ք. Սիսիան ք. Քաջարան	գ. Ալվանք գ. Բռնակոթ գ. Գորայք գ. Լեհվազ գ. Լեռնածոր գ. Հարթաշեն գ. Հալիձոր գ. Շաքի գ. Շինուհայր գ. Վարդանիձոր գ. Վերիշեն գ. Տոլորս գ. Քարահունջ	

Ելնելով տեղեկատվական մատչելիության ամփոփիչ վարկանիշներից՝ առանձնացվել են նաև 3 մարզերի կտրվածքով դիտարկված բոլոր կայքերի առաջատար վարկանիշ ունեցող 6 համայնքային պաշտոնական համացանցային կայքերը, որոնք ներկայացվում են ստորև՝ N17 աղյուսակով:

Աղյուսակ N17. ՀՀ Գեղարքունիքի, Շիրակի և Սյունիքի մարզերի առաջատար վարկանիշ ունեցող 6 համայնքային պաշտոնական համացանցային կայքերը

N	Մարզը	Համայնքը	Կայքի հասցեն	Տեղեկատվական մատչելիության գործակիցը՝ միավոր	Տեղեկատվական մատչելիության աստիճանը՝ %
1	Գեղարքունիք	ք. Սևան	http://sevan.city.am	256	88,89%
2	Շիրակ	ք. Գյումրի	http://www.gyumricity.am	205	71,18%
3	Գեղարքունիք	ք. Գավառ	http:www.gavariqaghaqapetaran.am	202	70,14%
4	Սյունիք	ք. Կապան	http://kapan.am/	194	67,36%
5	Գեղարքունիք	գ. Նորատուս	http://noratus.am	172	59,72%
6	Սյունիք	ք. Ագարակ	http://agarak.am/	156	54,17%

Այսպիսով, **ԱՌԱՋԻՆ ԽՄԲՈՒՄ՝ տեղեկությունների ամբողջականության բարձր աստիճան,** ըստ տեղեկատվական մատչելիության ամփոփիչ վարկանիշային տվյալների, 3 մարզերի կտրվածքով զբաղեցնում է միայն **մեկ**՝ Գեղարքունիքի մարզի **Սևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքն է**: Այն ունի **88,89** տոկոսանոց տեղեկատվական մատչելիություն: Այս կայքում առկա են օրենսդրությամբ պահանջվող գրեթե բոլոր տեղեկությունները: Բացակայում են միայն քաղաքապետարանի մասին պատմությունը և քաղաքապետարանում իրականացված ստուգումների, ուսումնասիրությունների, աուդիտի մասին տեղեկատվությունը: Այս առումով չենք կարող բացառել, որ նման ստուգումներ, ուսումնասիրություններ կամ աուդիտ չեն իրականացվել: Թեև Սևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքը ՀԿՏՀ հիման ստեղծված, տիպային կայք է, սակայն այն տարբերվում է դիտարկված մնացած ՀԿՏՀ կայքերից, քանի որ այստեղ «Օգտակար հղումներ» մասում, որն հանդիսանում է պատկերներով հղումների հավաքածու դեպի որևէ այլ կայք, այլ էջ կամ որևէ ծրագրային միջոցի բեռնավորում, որպես նորամուծություն, ավելացվել են «Կառուցվածք», «Գնումների հայտարարություններ», «Նախագծերի կատալոգ», «Ուղեցույց» պատուհան-բաժինները: «Գնումների հայտարարություններ» բաժնին մկնիկի կոճակի 1 սեղմումով բացվում է ՀՀ ֆինանսների նախարարության պետական գնումների պաշտոնական ինտերնետային կայքը՝ http://gnumner.am/, որտեղ ամբողջ կայքում համայնքի անունը փնտրելով կարելի է ծանոթանալ Սևանի քաղաքապետարանին վերաբերող ինչպես ընթացիկ, այնպես և ժամկետանց գնումների հայտարարություններին: «Նախագծերի կատալոգ» բաժնին մկնիկի կոճակի 1 սեղմումով բացվում է ՀՀ քաղաքաշինության նախարարության http://www.minurban.am/am/projcatalog կայքի նախագծերի կատալոգը: «Կառուցվածք» բաժին-պատուհանին մկնիկի կոճակի 1 սեղմումով բացվում է աղյուսակ, որը ներառում է քաղաքապետարանին վերաբերող տեղեկությունների սյունակներ՝ կոնտակտներ, մանրամասներ, հաշվառման տվյալներ, բանկային տվյալներ, հաստիքացուցակ, աշխատակիցներ, թափուր հաստիքներ, կադրերի ռեզերվ, Ա/Հ տեղեկագիր, փաստաթղթեր: Հարկ է նշել, որ ՀԿՏՀ կայքերի մեծ մասն ունի համայնքապետարանին վերաբերող վերոթվարկված տեղեկությունների աղյուսակը, սակայն այն հասանելի է ոչ թե մկնիկի կոճակի 1, այլ 3 սեղմումով և որ, ամենակարևորն է, շատ դժվար է այն «հայտնաբերել»: Այս մասին մանրամասն նկարագրված է սույն զեկույցի հաջորդ՝ 5.5-րդ ենթաբաժնում:

ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲՈՒՄ՝ տեղեկությունների ամբողջականության միջինից բարձր աստիճան,

զբաղեցնում են համայնքային **չորս՝ 71,18%** տոկոս տեղեկատվական մատչելիությամբ Գյումրու, **70,14%** տոկոս տեղեկատվական մատչելիությամբ Գավառի, **67,36%** տոկոս տեղեկատվական մատչելիությամբ Կապանի քաղաքապետարանների և **59,72%** տեղեկատվական մատչելիությամբ Գեղարքունիքի մարզի Նորատուսի գյուղապետարանի պաշտոնական կայքերը: Այս կայքերում ևս հիմնական տեղեկություններն առկա են, որոշ տեղեկություններ ամբողջական չեն, այդ իսկ պատճառով նշում ենք միայն բացակայող հիմնական տեղեկությունները՝

- համայնքապետարանի հիմնական խնդիրներն ու գործառույթները,
- համայնքապետարանում իրականացված ստուգումների, ուսումնասիրությունների, աուդիտի մասին տեղեկատվությունը,
- տեղեկություններ իրականացվող /իրականացված ծրագրերի մասին (ծրագրերի ցանկը, տեղեկություններ ծրագրերի իրականացման շրջանակներում անցկացվող միջոցառումների մասին, հաշվետվություններ),
- համայնքներում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի, շենքերի և շինությունների, տրանսպորտային միջոցների մասին տեղեկատվությունը,
- գնումների մասին հայտարարությունները,
- առցանց հարցումները:

ԵՐՐՈՐԴ ԽՄԲՈՒՄ՝ տեղեկությունների ամբողջականության միջին աստիճան, զբաղեցնում են համայնքային **12՝** Շիրակի մարզի Արթիկի, Մարալիկի, Սյունիքի մարզի Ագարակի, Գորիսի, Մեղրու, Սիսիանի, Քաջարանի քաղաքապետարանների և Գեղարքունիքի մարզի Երանոսի, Զովաբերի, Վահանի, Վաղաշենի, Վարդենիկի գյուղապետարանների պաշտոնական կայքերը (7 քաղաքներ, 5 գյուղեր):

ՉՈՐՐՈՐԴ ԽՄԲՈՒՄ՝ տեղեկությունների ամբողջականության միջինից ցածր աստիճան, զբաղեցնում է դիտարկված համայնքային կայքերի մեծ մասը՝ ընդհանուր թվով **46** համայնքապետարանների պաշտոնական կայքեր՝ Գեղարքունիքի մարզի **3** քաղաքապետարաններ (Ճամբարակ, Մարտունի, Վարդենիս) և 3 մարզերի ընդհանուր թվով 43 գյուղապետարաններ:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԽՄԲՈՒՄ՝ տեղեկությունների ամբողջականության խիստ ցածր աստիճան, զբաղեցնում են ընդհանուր թվով **6՝** Գեղարքունիքի մարզի **3** գյուղապետարանների (Լիճք, Լուսակունք, Ձորագյուղ) և Շիրակի մարզի 3 գյուղապետարանների (Գեղանիստ, Գետափ, Սարալանջ) պաշտոնական կայքեր:

Այսպիսով, դիտարկված 69 կայքերի տեղեկատվական մատչելիության (ՏՄ) արդյունքները հետևյալն են:

Կայքերի խումբը	ԱՌԱՋԻՆ	ԵՐԿՐՈՐԴ	ԵՐՐՈՐԴ	ՉՈՐՐՈՐԴ	ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՏՄ աստիճանը	79-100%	56-78%	34-55%	12-33 %	0-11%
Կայքերի քանակը խմբում	1	4	12	46	6
Տոկոսային հարաբերակցությունը	1,45%	5,80%	17,39%	66,67%	8,70%



5.5. Գնահատման ընթացքը և վեր հանված հիմնական խնդիրները

Ինչպես արդեն նշել ենք մոնիտորինգի մեթոդաբանությունում, դիտարկվող համայնքային պաշտոնական կայքերում բովանդակության հետազոտության և վերլուծության համար հիմք են ընդունվել 32 չափորոշիչներ, որոնք ներկայացված են N2 հավելվածով: Հավելենք, որ նման մեթոդաբանությամբ Հայաստանում առաջին անգամ է հետազոտություն իրականացվում, հետևապես չենք բացառում, որ զեկույցում կարող են լինել որոշ բացթողումներ և անճշտություններ, ուստի երախտապարտ կլինենք ցանկացած գրավոր արձագանք ստանալու և ճշտումներ կատարելու հնարավորության համար:

Այս ենթաբաժնում անդրադառնում ենք այն հիմնական խնդիրներին, որոնք ի հայտ են եկել կայքերի դիտարկման և գնահատման ընթացքում՝ դրանք ներկայացնելով ըստ չափորոշիչների:

Մինչ այդ կրկին ընդգծենք, որ դիտարկված 69 կայքերից 67-ը ՀԿՏՀ հիման վրա գործող, միևնույն կառուցվածք և միատեսակ հնարավորություններ ապահովող տիպային կայքեր են, հետևապես այս կայքերին առնչվող խնդիրները նմանատիպ են: Ինչպես նշվում է Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի «Օգտագործողի ձեռնարկում»[28] «Համակարգի հիմքում ընկած է տեղեկատվության ստացման, մշակման, փոխանակման միասնականության և միասնական տեղեկատվական տարածության գաղափարը»: Եվ միասնական տեղեկատվական այս տարածությունը իր բազմաթիվ առավելությունների կողքին ունի տիպիկ խնդիրներ, որոնք հիմնականում **տեխնիկական բնույթի** են:

Թեև մեր կողմից իրականացվել է համայնքային պաշտոնական համացանցային կայքերի բովանդակային ուսումնասիրություն, սակայն դիտարկման ընթացքում վեր են հանվել նաև տեխնիկական բնույթի խնդիրներ, որոնցից մեծապես կախված է կայքերի բովանդակային նկա-

28. Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ, «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ: Օգտագործողի ձեռնարկ», 2010, Երևան:

րագիրը: Մի շարք տեղեկություններին հատուկ է **մատչելիության ցածր աստիճանը**՝ որոնումը խիստ դժվար է, տեղեկությունը տեղադրված է ոչ տրամաբանական բաժնում կամ խորագրի տակ, կամ տեղեկությունը կարելի է ստանալ այլ փաստաթղթի տեքստում միայն, կամ՝ օգտագործելով փնտրումը կայքի գլխավոր էջում կամ առանձին բաժիններում: Այս դեպքերում գտնված տեղեկությունների համար հիմնականում նշանակվել են միջին գնահատականներ:

Հաճախ ՀԿՏՀ համայնքային կայքերում բացակայում են գնահատվող չափանիշին վերաբերող բաժինները: Այդ դեպքերում գնահատման համար առաջնորդվել ենք հետևյալ մոտեցմամբ. բաժնի բացակայության դեպքում օգտագործել փնտրման հնարավոր տարբերակներ հօգուտ ՀԿՏՀ շահագործող և պաշտոնական կայք վարող համայնքապետարանների: Սակայն այս մոտեցումն ունի որոշակի վերապահում, քանի որ դիտարկումների ժամանակ մենք նկատի ենք ունեցել միջին վիճակագրական օգտատեր այցելուին, ով համացանցից օգտվելու միջին հմտություններ ունի: Հնարավորինս օբյեկտիվ մոտեցում ցուցաբերելու նպատակով, ի վերջո, հանգեցինք ՀԿՏՀ կայքերում հնարավորինս մանրակրկիտ որոնումներ իրականացնելու մոտեցմանը, քանի որ համայնքային կայքերի ստեղծման և վարման գործընթացը նոր է օրենսդրական լուծում ստացել, հետևապես հարկ է ավելի մեղմ մոտեցում ցուցաբերել նոր մեկնարկող այս գործընթացին: Միաժամանակ, մեր ուսումնասիրության նպատակը ոչ թե համայնքապետարանների ցածր ցուցանիշներն արձանագրելն է, այլ ընդհանուր մտահոգությունն ու համագործակցային աջակցությունն է համայնքային պաշտոնական կայքերի կայացմանը:

Գավառի և Գյումրու քաղաքապետարանների պաշտոնական ոչ տիպային կայքերը ևս իրենց յուրահատուկ խնդիրներն ունեն, որոնց նույնպես կանդրադառնանք յուրաքանչյուր չափորոշիչի հետազոտության և վերլուծության, ինչպես նաև գնահատման ընթացքը նկարագրելիս: Այս կայքերը ևս ունեն տեխնիկական բնույթի որոշ խնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն: Գավառի քաղաքապետարանի կայքում որոնումով տեղեկություններ գտնելը խիստ դժվար է: Գյումրու քաղաքապետարանի կայքի որոշ բաժիններ ավելի քիչ տեղեկություններ են պարունակում, քան դրանք ի հայտ են բերվում կայքի գլխավոր էջում փնտրում իրականացնելիս:

Անցնելով չափորոշիչների վերլուծությանը՝ նշենք, որ բովանդակային առումով դիտարկված բոլոր կայքերի առկա հիմնական թերացումներն են՝ կից փաստաթղթերի բացակայությունը, նորությունների սակավությունը և տեղադրված նորությունների մշակման ոչ բավարար պրոֆեսիոնալիզմը, համապատասխան բաժնի/բաժինների առկայության պարագայում նյութերի բացակայությունը, ոչ ամբողջականությունը:

1) Քաղաքապետարանի/գյուղապետարանի պատմությունը:

ՀԿՏՀ կայքերում բացակայում է նման բաժինը, և դիտարկված կայքերում որևէ համայնքապետարանի կողմից նմանաբնույթ նյութ չի տեղադրվել: Գնահատման համար մեր կողմից դիտարկվել է, թե առկա՞ է արդյոք համայնքի մասին պատմություն կայքի գլխավոր էջի «Նորություններ» բաժնում և առկայությունը գնահատվել մինչև 3 միավորով:

Գյումրու քաղաքապետարանի պաշտոնական կայքում ևս բացակայում է քաղաքապետարանի մասին պատմությունը, և միայն Գավառի քաղաքապետարանն ունի «Քաղաքապետարանի պատմություն» ենթաբաժինը, որտեղ առկա է տեղադրված տեղեկություն: Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայության համար միայն Գավառի քաղաքապետարանի կայքն է գնահատվել առավելագույն միավորով:

2) Քաղաքապետարանի/գյուղապետարանի ընթացիկ գործունեության մասին տեղեկատվությունը:

Դիտարկվել են ՀԿՏՀ կայքերի «Նորություններ» բաժինները, ինչպես նաև Գավառի և Գյումրու քաղաքապետարանների կայքերի «Նորություններ» ենթաբաժինները: Հաշվի է առնվել 2015թ.-ին տեղադրված տեղեկությունների առկայությունը և իրականացվել է գնահատում՝ ելնելով տեղադրված տեղեկությունների քանակից: Հաշվի է առնվել նաև համայնքների բնույթը՝ քաղաքային կամ գյուղական, շատ կամ քիչ բնակչություն ունեցող և այլն: Կարևորվել է այն հանգամանքը, որ տեղեկությունները վերաբերեն քաղաքապետարանների/գյուղապետարանների ընթացիկ գործունեությանը և ոչ թե համայնքներում տեղի ունեցած իրադարձություններին:

Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայության համար առավելագույն միավորով են գնահատվել 3 մարզերի միայն քաղաքապետարանների կայքերը՝ Գավառ, Սևան, Գյումրի, Ագարակ, Գորիս, Կապան, Մեղրի, Սիսիան:

3) Քաղաքապետարանի/գյուղապետարանի կառուցվածքը (հաստիքացուցակ, աշխատակիցների ցուցակ, աշխատակիցների կոնտակտային տվյալներ) և գրաֆիկական պատկերը:

ՀԿՏՀ համայնքային կայքերում բացակայում է նման բաժինը, բացառությամբ Սևանի քաղաքապետարանի կայքի:

Ինչպես արդեն նշել ենք, Սևանի քաղաքապետարանի կայքում առկա է «Կառուցվածք» բաժին-պատուհան, որը ներառում է քաղաքապետարանին վերաբերող տեղեկությունների սյունակներ՝ կոնտակտներ, մանրամասներ, հաշվառման տվյալներ, բանկային տվյալներ, հաստիքացուցակ, աշխատակիցներ, թափուր հաստիքներ, կադրերի ռեզերվ, Ա/Հ տեղեկագիր, փաստաթղթեր: Իսկ ՀԿՏՀ համայնքային մնացած կայքերում, եթե առկա է համայնքապետարանին վերաբերող վերոթվարկված տեղեկությունների աղյուսակը, ապա այն հասանելի է մկնիկի կոճակի 3 սեղմումով և որ, ամենակարևորն է, շատ դժվար է այն «հայտնաբերել»: Այսպես, նախ պետք է սեղմել «Համայնքի ղեկավար» կոճակը, ապա պետք է սեղմել որոնման ենթակա համայնքի ղեկավարի անուն, ազգանունը, և եթե առկա են տեղեկություններ, ապա բացվում է ներդիր-էջ համայնքի ղեկավարի աղյուսակային տվյալներով: Ապա անհրաժեշտ է սեղմել այդ էջի ձախ անկյունում առկա «Վերադարձ աշխատակիցներին» ենթաբաժինը, որն արդեն բացում է աշխատողների աղյուսակային տվյալները, ներառյալ դիտարկվող համայնքապետարանի հաստիքացուցակը և աշխատակիցների ցուցակը: Ըստ էության, կայքի սովորական այցելուի համար նման տեղեկությունների հայտնաբերումը գրեթե անհավանական է:

Իրականացվել է նաև այս չափորոշիչով նշված տեղեկությունների փնտրման մեկ այլ մոտեցում: ՀԿՏՀ կայքերի «ՏԻՄ» բաժնի «Ավագանու որոշումներ» ենթաբաժնում «հաստիքացուցակ» բառով փնտրվել է 2015թ.-ի համար ընդունված ավագանու համապատասխան որոշումը: Որոշման առկայությունից բացի, ուշադրություն է հատկացվել այն հանգամանքին, թե կցվա՞ծ են արդյոք համապատասխան փաստաթղթերը:

Ոչ տիպային կայքերից միայն Գավառի քաղաքապետարանի պաշտոնական կայքում է առկա «Կառուցվածք» ենթաբաժինը, որտեղ տեղադրված են համապատասխան տեղեկություններ:

Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայության համար առավելագույն միավորով են գնահատվել Գավառի, Սևանի և Կապանի քաղաքապետարանների կայքերը:

4) Քաղաքապետարանի/գյուղապետարանի հիմնական խնդիրներն ու գործառույթները:

Այս բաժինը ևս բացակայում է ՀԿՏՀ համայնքային կայքերում, բացառությամբ Սևան քաղաքի պաշտոնական կայքի, որտեղ տեղադրված ուղեցույցը ներառում է քաղաքապետարանի հիմնական խնդիրներն ու գործառույթները:

Ինչպես նախորդ չափորոշիչի գնահատման պարագայում, կրկին 3 քայլով իրականացվող որոնումով «Վերադարձ աշխատակիցներին» ենթաբաժնի առկայության դեպքում ուսումնասիրվել է դիտարկվող համայնքապետարանի աշխատողների աղյուսակային տվյալների «Աշխատակիցներ» և «Հաստիքացուցակ» սյունակներում աշխատողների պաշտոնների անձնագրերի կցված լինելու հանգամանքը:

Ոչ տիպային կայքերում ևս նման բաժին կամ նման խորագրով նյութեր տեղադրված չեն, սակայն հաշվի է առնվել, որ Գավառի քաղաքապետարանի կողմից կայքում «Ենթակա կառույցներ» բաժնում առկա են տեղեկություններ այդ կառույցների հիմնական խնդիրների ու գործառույթների մասին:

Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայության համար առավելագույն միավորով է գնահատվել միայն Սևանի քաղաքապետարանի կայքը:

5) Քաղաքապետարանի/գյուղապետարանի կառուցվածքային և (կամ) առանձնացված ստորաբաժանումների, իր ենթակայության մարմինների խնդիրներն ու գործառույթները, գտնվելու վայրերը, աշխատակազմի կոնտակտային տվյալները:

ՀԿՏՀ համայնքային կայքերում քաղաքապետարանի/գյուղապետարանի կառուցվածքային և (կամ) առանձնացված ստորաբաժանումներին, ենթակայության մարմիններին վերաբերող համապատասխան բաժին առկա չէ, հետևապես նրանցում տեղադրված չեն վերոհիշյալ ստորաբաժանումների և մարմինների խնդիրներն ու գործառույթները, գտնվելու վայրերը, աշխատակազմի կոնտակտային տվյալները:

Հարկ է նշել, որ որոշ համայնքապետարանների «Վերադարձ աշխատակիցներին» ենթաբաժնում համայնքապետարանի աշխատողների աղյուսակային տվյալները ներառում են նաև քաղաքապետարանի/գյուղապետարանի կառուցվածքային և (կամ) առանձնացված ստորաբաժանումների, ենթակայության մարմինների աշխատողների անվանական, կենսագրական տվյալները, անձնական տվյալները, սակայն դրանք այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունները չեն: Այս առումով ՀԿՏՀ կայքերից բացառություն է միայն Սևանի քաղաքապետարանի կայքը, քանի որ տեղադրված «Ուղեցույց» պատուհան-բաժնի սեղմումով բեռնվում է «Քաղաքապետարանի ուղեցույց» փաստաթուղթը: Վերջինս պարունակում է չափորոշիչով պահանջվող տեղեկությունները:

Համապատասխան տեղեկությունները տեղադրված են նաև Գավառի և Գյումրու քաղաքապետարանների պաշտոնական կայքերում համապատասխանաբար «Ենթակա կառույցներ» և «Համայնքային ենթակայության տակ գտնվող կառույցները» բաժիններում, սակայն ամբողջական տեղեկությունները տեղադրված են միայն Գավառի քաղաքապետարանի կողմից:

Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայության համար առավելագույն միավորով են գնահատվել Գավառի և Սևանի քաղաքապետարանների կայքերը:

6) Այն նորմատիվ ակտերը կամ դրանց հղումները, որոնցով կարգավորվում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը:

ՀԿՏՀ տիպային կայքերում համակարգը մշակողների կողմից արդեն իսկ տեղադրված են համապատասխան նորմատիվ իրավական ակտեր, այդ իսկ պատճառով այս չափորոշիչը մի-

ասնական գնահատվել է 7 միավորով: Առավելագույն 9 միավոր չի տրվել, քանի որ որևէ համայնքապետարանի կողմից այլևս չեն տեղադրվել ոլորտը կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտեր: Գնահատման ընթացքում նաև կարևորվել է ՀՀ կառավարության համապատասխան որոշումների բացակայությունը:

Գավառի և Գյումրու քաղաքապետարանների պաշտոնական կայքերում առկա են ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտեր, սակայն սահմանափակ քանակությամբ:

Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայության համար որևէ համայնքային կայք առավելագույն միավորով չի գնահատվել:

7) Տեղեկություններ իրականացվող /իրականացված ծրագրերի մասին (ծրագրերի ցանկը, տեղեկություններ ծրագրերի իրականացման շրջանակներում անցկացվող միջոցառումների մասին, հաշվետվություններ):

ՀԿՏՀ տիպային կայքերի պարագայում դիտարկվել է «Համայնք» բաժնի «Զարգացման ծրագրեր» ենթաբաժինը: Այս բաժնում համայնքի քառամյա զարգացման ծրագրերի առկայությունը գնահատվել է 1-ական միավորով, քանի որ քառամյա զարգացման ծրագրերի «առկայություն/բացակայություն» բնութագրիչն առանձին գնահատվել է համապատասխան 18-րդ չափորոշիչով: Այլ ծրագրերի բացակայությունը գնահատվել է 0 միավորով, իսկ առկայությունը գնահատվել է մինչև 9 միավոր՝ ելնելով այն հանգամանքից, թե տեղադրվա՞ծ են, արդյոք, ծրագրերի իրականացման շրջանակներում անցկացվող միջոցառումները, հաշվետվությունները:

Նմանատիպ մոտեցում է ցուցաբերվել նաև ոչ տիպային կայքերին:

Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայության համար առավելագույն միավորով են գնահատվել Գյումրու և Կապանի քաղաքապետարանների կայքերը:

8) Քաղաքապետարանում/գյուղապետարանում իրականացված ստուգումների, ուսումնասիրությունների, աուդիտի մասին տեղեկատվություն:

Դիտարկված բոլոր համայնքային կայքերում բացակայում է այս չափորոշիչով նախատեսված տեղեկությունների տեղադրման համապատասխան բաժին, հետևապես բոլոր կայքերին միավոր չի տրվել, բացառությամբ Գավառի քաղաքապետարանի կայքի, քանի որ «Հաշվետվություններ» բաժնում տեղադրված է 1 հաշվետվություն՝ «Ներքին աուդիտի բաժին, 2015թ. առաջին կիսամյակ», որի համար տրվել է 3 միավոր գնահատական:

9) ՏԻՄ-երի կողմից ընդունվող իրավական ակտերի նախագծերը և որոշումները (համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներ, աշխատակազմի քարտուղարի հրամաններ):

ՀԿՏՀ համայնքային կայքերում բացակայում է աշխատակազմի քարտուղարի հրամաններին վերաբերող համապատասխան բաժին, ուստի գնահատվել է չափորոշիչով պահանջվող մնացած իրավական ակտերի առկայությունը 2015թ. դրությամբ մինչև 8 միավորով՝ ելնելով դրանց ամբողջականությունից: Թեև Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի «Օգտագործողի ձեռնարկում» նկարագրվում է աշխատակազմի քարտուղարի կողմից հրամանների շարադրման և հետագա աշխատանքին առնչվող ընթացակարգը, սակայն այդ իրավական ակտերը սովորական այցելուին տեսանելի չեն:

Դիտարկված համայնքային կայքերից միայն Գավառի քաղաքապետարանի կայքում են առկա աշխատակազմի քարտուղարի հրամաններ, սակայն բացակայում են ավագանու որոշումների նախագծերը:

Գյումրու քաղաքապետարանի կայքում էլ բացակայում է քաղաքապետի որոշումներին վե-

րաբերող առանձին ենթաբաժին, սակայն քաղաքապետի որոշ որոշումներ տեղադրված են «Իրավական ակտեր» ենթաբաժնում: Գյումրու քաղաքապետարանի կայքում ևս բացակայում են ավագանու որոշումների նախագծերը:

Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայության համար զգալի թվով համայնքապետարանների կայքեր գնահատվել են 8 միավորով:

10) Համայնքի ղեկավարի, ավագանու ուղերձները, ավագանու կանոնակարգը:

Գնահատվել են չափորոշիչով պահանջվող տեղեկությունները «առկայություն/բացակայություն» բնութագրիչով՝ մինչև 9 միավորով՝ ելնելով դրանց ամբողջականությունից: Հաշվի է առնվել ավագանու կանոնակարգի՝ գործողության մեջ լինելու հանգամանքը:

Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայության համար առավելագույն միավորով գանահատվել են Գյումրու, Գավառի, Սևանի, Կապանի և Սիսիանի քաղաքապետարանների կայքերը:

11) Քաղաքապետարանի/գյուղապետարանի գործունեության վերաբերյալ հաշվետվություններ, զեկույցներ և այլ տեղեկատվություն:

ՀԿՏՀ տիպային կայքերի «Համայնք» բաժնի «Հաշվետվություններ և վերլուծություններ» ենթաբաժնում առկա են տեղեկություններ, որոնք 25 տիպի գրաֆիկական և ցուցակային հաշվետվություններ են (սեռատարիքային սանդղակը, բնակչության բնական աճը, միջին տարիքը, կրթական մակարդակը և այլն) և չեն վերաբերում քաղաքապետարանի/ գյուղապետարանի գործունեությանը: Այդ պատճառով «հաշվետվություն», «զեկույց» բառերով ընդլայնված որոնում է իրականացվել և այս չափորոշիչը գնահատվել է ըստ որոնման արդյունքների:

Գավառի քաղաքապետարանի պաշտոնական կայքում առկա է «Հաշվետվություններ» բաժինը, որտեղ առկա են համապատասխան տեղեկություններ, ինչպես նաև քաղաքապետարանի գործունեության վերաբերյալ կայքում տեղադրված են բավարար քանակությամբ տեսանյութեր:

Գյումրու քաղաքապետարանի պաշտոնական կայքում թեև համապատասխան բաժին կամ ենթաբաժին չկա, սակայն տարբեր բաժիններում առկա են բավարար քանակությամբ համապատասխան տեղեկություններ: Գյումրու քաղաքապետարանի պաշտոնական կայքում առկա է նաև «Քաղաքապետարանի ԺԱՄ» ենթաբաժինը, որտեղ պարբերաբար տեղադրվում են այդ հաղորդաշարի տեսանյութերը:

Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայության համար առավելագույն միավորով են գնահատվել Գավառի, Գյումրու և Կապանի քաղաքապետարանների կայքերը:

12) ՏԻՄ ներկայացվող՝ ՀՀ օրենսդրությամբ և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դիմումների, տեղեկատվություն ստանալու մասին հարցումների և այլ փաստաթղթերի օրինակելի ձևերը, դրանց լրացման վերաբերյալ ցուցումները, ինչպես նաև պաշտոնատար անձանց գործողությունների (անգործությունների) վարչական և քրեական կարգով վիճարկման կարգը:

ՀԿՏՀ համայնքային կայքերում համակարգը մշակողների կողմից արդեն իսկ տեղադրված են ձևանմուշներ «Տեղեկատուներ» բաժնի «Ձևաթղթերի շտեմարան» ենթաբաժնում: Սակայն այս շտեմարանում բացակայում են տեղեկատվություն ստանալու մասին հարցման ձևը և պաշտոնատար անձանց գործողությունների (անգործությունների) վարչական և քրեական կարգով վիճարկման կարգը:

Գյումրու քաղաքապետարանի պաշտոնական կայքում առկա է համապատասխան բաժին, առկա են բավարար քանակության ձևանմուշներ, սակայն նույնպես բացակայում են տեղեկատվություն ստանալու մասին հարցման ձևը և պաշտոնատար անձանց գործողությունների (անգործությունների) վարչական և քրեական կարգով վիճարկման կարգը:

Գավառի քաղաքապետարանի պաշտոնական կայքում առկա է համապատասխան բաժին, սակայն տեղադրված են ընդամենը 2 ձևանմուշներ:

Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայության համար բոլոր կայքերը գնահատվել են 7 միավորով, բացառությամբ Գեղարքունիքի մարզի Երանոսի գյուղապետարանը, քանի որ վերջինիս կայքում «Ձևաթղթերի շտեմարան» ենթաբաժնին մկնիկի կոճակի սեղմումով բացվում է կայքի գլխավոր էջը:

13) Թափուր պաշտոն զբաղեցնելու մասին տեղեկությունները՝ թափուր պաշտոնների ցանկը, ներկայացվող պահանջները, աշխատանքի ընդունման կարգը, մրցույթի արդյունքները և դրանց բողոքարկման կարգը կամ հղում համապատասխան մարմնի պաշտոնական կայքին:

ՀԿՏՀ համայնքային կայքերում առկա են այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների տեղադրման համար «Թափուր հաստիքներ» պատուհան-բաժինը և «Աշխատանք» ենթաբաժինը: Գյումրու քաղաքապետարանի պաշտոնական կայքը ևս ունի «Թափուր պաշտոններ» ենթաբաժինը, որտեղ տեղադրված են բավականաչափ հայտարարություններ: Գավառի քաղաքապետարանի պաշտոնական կայքը նման բաժին չունի, սակայն ունի «Հայտարարություններ» ենթաբաժինը, որտեղ այս չափորոշիչով դիտարկվող տեղեկություններ տեղադրված չեն:

Այս չափորոշիչի գնահատման ընթացքում հարց առաջացավ, թե միգուցե դիտարկվող համայնքներում չեն եղել թափուր պաշտոններ, հետևաբար կայքերում չէին կարող տեղադրվել համապատասխան հայտարարություններ և տեղեկություններ: Այդ պատճառով որոշվեց այս չափորոշիչով դիտարկվող տեղեկությունների տեղադրման հնարավորության և տեղեկությունների բացակայության դեպքում տալ 3 միավոր գնահատական, ժամկետանց տեղեկությունների դեպքում՝ տալ 4-5 միավոր, ընթացիկ տեղեկությունների դեպքում՝ մինչև 7 միավոր գնահատական:

Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայության համար որևէ համայնքային կայք առավելագույն միավորով չի գնահատվել, քանի որ որևէ կայքում առկա չեն մրցույթի արդյունքները և դրանց բողոքարկման կարգը:

14) Պաշտոնական միջոցառումների մասին տեղեկությունները, որոնք կազմակերպվում են քաղաքապետարանի/գյուղապետարանի կողմից (ավագանու նիստեր, համայնքի ղեկավարի մոտ խորհրդակցություններ և այլն):

ՀԿՏՀ տիպային կայքերում «ՏԻՄ» բաժնում առկա են «Ավագանու նիստեր» և «Խորհրդակցություններ» ենթաբաժինները, որոնք բովանդակում են տեղեկություններ կայանալիք և կայացած վերոնշյալ պաշտոնական միջոցառումների մասին: Համայնքի ղեկավարի մոտ խորհրդակցությունների մասին տեղադրված են շատ քիչ թվով համայնքապետարանների կողմից (որոնք տեղի են ունեցել 2009-2014թթ. ընթացքում), իսկ ավագանու նիստերի մասին տեղեկությունները տեղադրված են ավելի մեծ թվով համայնքապետարանների կողմից:

Այս չափորոշիչի գնահատման համար մեր կողմից կարևորվել և ուսումնասիրվել է ավագանու նիստերի մասին հայտարարությունների առկայությունը՝ ավագանու հերթական նիստի ժամանակի, վայրի վերաբերյալ հրապարակված տեղեկությունը և օրակարգի նախագի-

ծը, քանի որ յուրաքանչյուր համայնքային պաշտոնական կայքի նպատակը պետք է լինի իր գործունեության թափանցիկության ապահովումը: ՀԿՏՀ համայնքային կայքերում միայն Սևանի քաղաքապետարանի կողմից են ամբողջությամբ տեղադրվել ավագանու նիստերի բոլոր հայտարարությունները:

Գավառի քաղաքապետարանի պաշտոնական կայքում չափորոշիչով պահանջվող տեղեկություններից առկա են միայն ավագանու նիստերի արձանագրությունները, իսկ Գյումրու քաղաքապետարանի պաշտոնական կայքում առկա են բոլոր տեղեկությունները (մասնավորապես «Հայտարարություններ» ենթաբաժնում տեղադրված են ավագանու նիստերի բոլոր հայտարարությունները, նորություններում առկա են բազմաթիվ տեղեկություններ համայնքի ղեկավարի խորհրդակցությունների վերաբերյալ):

Դիտարկված բոլոր կայքերի առումով էական թերացում է այն, որ նախատեսված չէ ավագանու նիստերի բոլոր հայտարարությունների թարմացմանը հետևելու հնարավորությունը:

Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայության համար առավելագույն միավորով են գնահատվել Սևանի, Գյումրու, Կապանի, Սիսիանի, Քաջարանի քաղաքապետարանների և Գեղարքունիքի մարզի Զովաբեր, Վահան, Վաղաշեն գյուղապետարանների կայքերը:

15) Համայնքի, քաղաքապետարանի մասին ԶԼՄ-ներում հրապարակումները կամ դրանց հղումները:

Այս չափորոշիչը ՀԿՏՀ համայնքային կայքերում գնահատվել է «ԶԼՄ-ները մեր մասին» բաժնի տեղեկությունների ուսումնասիրության արդյունքներով:

Թեև Գավառի և Գյումրու քաղաքապետարանների պաշտոնական կայքերում չափորոշիչով նշված տեղեկությունների համար համապատասխան բաժիններ չկան, սակայն առկա են քաղաքապետարանների գործունեության վերաբերյալ ԶԼՄ-ների կողմից պատրաստած որոշ տեսանյութեր:

Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայության համար առավելագույն միավորով են գնահատվել Գեղարքունիքի մարզի Սևանի, Վահանի, Վարդենիկի և Սյունիքի մարզի Մեղրու համայնքապետարանների կայքերը:

16) Քաղաքապետարանին/գյուղապետարանին կամ դրանց պաշտոնատար անձանց տրված մրցանակներն ու շնորհակալագրերը:

Դիտարկված համայնքային կայքերում, բացառությամբ Գյումրու քաղաքապետարանի, առկա է համայնքապետարանին կամ դրանց պաշտոնատար անձանց տրված մրցանակների ու շնորհակալագրերի մասին համապատասխան բաժինը: Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայությունը ուսումնասիրվել է ոչ միայն նշված բաժնում, այլ նաև նորություններում:

Գյումրու քաղաքապետարանի պաշտոնական կայքում համապատասխան բաժին չկա, սակայն համապատասխան 2 նյութեր տեղադրված են գլխավոր էջում, ինչպես նաև փնտրումով գտնվել են համապատասխան բովանդակությամբ 3 նյութեր:

Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայության համար առավելագույն միավորով գնահատվել են Գյումրու, Կապանի, Սևանի քաղաքապետարանների կայքերը:

17) Համայնքի ղեկավարի, ավագանու անդամների անունները, ազգանունները, կենսագրությունը, կոնտակտային տվյալները:

Դիտարկված բոլոր կայքերում առկա են համապատասխան բաժիններ, և այս չափորոշի-

չը գնահատվել է՝ ելնելով տեղեկությունների ամբողջականությունից: Հիմնական թերացում է հեռախոսահամարների, կենսագրականների բացակայությունը:

Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայության համար առավելագույն միավորով են գնահատվել Գեղարքունիքի մարզի 5, Շիրակի մարզի 3 և Սյունիքի մարզի 3 համայնքապետարանների կայքեր:

18) Համայնքի զարգացման ծրագրերը:

Դիտարկված բոլոր կայքերում առկա են համապատասխան բաժիններ, և այս չափորոշիչը գնահատվել է՝ ելնելով համայնքի զարգացման քառամյա ծրագրի/ծրագրերի «առկայության/բացակայություն» բնութագրիչից:

Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայության համար առավելագույն միավորով են գնահատվել Գեղարքունիքի մարզի 9, Շիրակի մարզի 9 և Սյունիքի մարզի 6 համայնքապետարանների կայքեր: Հատկանշական է Գյումրու քաղաքապետարանի կայքի մոտեցումը. համայնքի զարգացման քառամյա ծրագիրը տեղադրված է նաև կայքի գլխավոր էջում:

19) Տեղական տուրքի և վճարների դրույքաչափերը:

Դիտարկված բոլոր կայքերում, բացառությամբ Գյումրու քաղաքապետարանի, առկա են համապատասխան բաժիններ, և այս չափորոշիչը գնահատվել է՝ ելնելով 2015թ. համար սահմանված տեղական տուրքի և վճարների դրույքաչափերի «առկայության/բացակայություն» բնութագրիչից: Թեև Գյումրու քաղաքապետարանի կայքը չունի համապատասխան բաժին, սակայն «Իրավական ակտեր» բաժնում տեղադրված է Գյումրի համայնքի ավագանու 2014թ. դեկտեմբերի 12-ի N174-Ն որոշման հավելվածը տեղական տուրքի և վճարների դրույքաչափերի վերաբերյալ:

Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայության համար առավելագույն միավորով են գնահատվել Գեղարքունիքի մարզի 6, Շիրակի մարզի 4 և Սյունիքի մարզի 7 համայնքապետարանների կայքեր:

20) Համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը և վայրը:

ՀԿՏՀ համայնքային կայքերում համապատասխան բաժին չկա: Այդ պատճառով տեղեկություններ գտնելու համար մեր կողմից որոնում է իրականացվել «Համայնքի ղեկավարի որոշումներ» բաժնում, ինչպես նաև ուսումնասիրվել է «Տեղեկատուներ» բաժնի «Հաճախակի տրվող հարցեր» ենթաբաժնում «Ինչպե՞ս գրանցվել ընդունելության քաղաքապետի մոտ» ենթաբաժինը (այստեղ ՀԿՏՀ մշակողների կողմից տեղադրված է տեքստի օրինակ, որը շատ քիչ թվով համայնքապետարանների կողմից է այն համապատասխանեցվել):

Գյումրու և Գավառի քաղաքապետարանների կայքերում «Իրավական ակտեր» բաժնում առկա են չափորոշիչով պահանջվող տեղեկությունները:

Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայության համար առավելագույն միավորով են գնահատվել Գավառի, Սևանի, Գյումրու, Կապանի քաղաքապետարանների և Երանոսի գյուղապետարանի կայքերը:

21) Քաղաքապետարանի/գյուղապետարանի կողմից մատուցվող ծառայությունների (այդ թվում առցանց), ընթացակարգերի նկարագրություն, դրանց վերաբերյալ պարզաբանելու իրավասություն ունեցող անձի կոնտակտային տվյալները:

ՀԿՏՀ համայնքային կայքերում առկա է «Ծառայություններ» համապատասխան բաժինը 7 ենթաբաժիններով, որոնք հանդիսանում են ծառայությունների մատուցման ընթացակարգեր, օրինակ՝ հարկերի պարտքի կամ անձի դիմումի, գրության ընթացքի, վարձակալական վճարների, համայնքում սահմանված տեղական տուրքերի և վճարների հաշվարկման վերաբերյալ, սակայն այս ծառայություններից օգտվելու համար հարկ է գրանցվել համակարգում և անձնական տվյալների ներմուծմամբ ստանալ տեղեկություններ: Հարկավ, դիտարկումների ընթացքում տեխնիկապես հնարավոր չէր պարզել, թե ինչպես են աշխատում այս ընթացակարգերը: Բացի այդ, այս բաժնում բացակայում են ընթացակարգերի նկարագրությունները և դրանց վերաբերյալ պարզաբանելու իրավասություն ունեցող անձանց կոնտակտային տվյալները: Ելնելով այն հանգամանքից, որ ՀԿՏՀ համայնքային կայքերում համակարգը մշակողների կողմից արդեն իսկ ստեղծվել են ծառայությունների մատուցման ընթացակարգեր, բոլոր ՀԿՏՀ համայնքային կայքերին ցուցաբերվել է միասնական մոտեցում՝ այս չափորոշիչով նշված ընթացակարգերից օգտվելու հնարավորությունը գնահատելով 4 միավորով:

Գավառի և Գյումրու քաղաքապետարանների պաշտոնական կայքերում այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայության համար համապատասխան բաժիններ չկան: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2 քաղաքապետարանների կայքերում առկա են համայնքային ենթակայության կառույցների ղեկավարների, այսինքն՝ այդ կառույցների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ պարզաբանելու իրավասություն ունեցող անձի կոնտակտային տվյալները, ինչպես ՀԿՏՀ համայնքային կայքերի դեպքում, գնահատվել է 4 միավորով:

22) Հղումներ պետական մարմինների, ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ կառավարության, համապատասխան մարզպետարանի և, առկայության դեպքում, նաև իր ենթակայության մարմինների պաշտոնական կայքերին:

ՀԿՏՀ համայնքային կայքերում հղումները հիմնականում տեղադրված են համակարգը մշակողների կողմից: Այդ հղումներում բացակայում են ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ կառավարության, ինչպես նաև, առկայության դեպքում, ենթակայության մարմինների պաշտոնական կայքերի հղումները: Այդ պատճառով բոլոր կայքերը գնահատվել են 4 միավորով, բացառությամբ Գեղարքունիքի մարզի Նորատուսի և Վարդենիկի գյուղապետարանների, քանի որ նրանց կողմից ավելացվել են նաև չափորոշիչով պահանջվող հղումները:

Գավառի և Գյումրու քաղաքապետարանների պաշտոնական կայքերն ունեն համապատասխան բաժիններ և, բացի չափորոշիչով պահանջվող հղումներից, կայքերում տեղադրված են բավականաչափ այլ հղումներ:

Այս չափորոշիչով պահանջվող հղումների առկայության համար առավելագույն միավորով գնահատվել են Գավառի, Գյումրու քաղաքապետարանների և Վարդենիկի գյուղապետարանի կայքերը:

23) Քաղաքապետարանի/գյուղապետարանի կոնտակտային տվյալները՝ փոստի հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն, ինտերնետային կայքի հասցեն, հասցեի քարտեզային պատկերը, հեռախոսահամարները, ֆաքսը:

ՀԿՏՀ կայքերում չափորոշիչով պահանջվող տեղեկությունները կարող են տեղադրված լինել «Համայնք» բաժնի «Հետադարձ կապ» ենթաբաժնում, «Վերադարձ աշխատակիցներին» ենթաբաժնի առկայության դեպքում դիտարկվող համայնքապետարանի աղյուսակային «Կոնտակտներ» սյունակում, ինչպես նաև կայքերի ստորին մասում: Սևանի քաղաքապե-

տարանի կողմից վերոհիշյալ տեղեկությունները տեղադրվել են «Կառուցվածք» բաժնում և «Ուղեցույցում», ինչպես նաև կայքի ստորին մասում: Չափորոշիչով պահանջվող տեղեկությունները գնահատվել են՝ ելնելով դրանց ամբողջականությունից, քանի որ երբեմն չի նշվում որևէ կոնտակտային տվյալ և սովորաբար բացակայում է հասցեի քարտեզային պատկերը:

Գավառի և Գյումրու քաղաքապետարանների պաշտոնական կայքերը ևս ունեն համապատասխան բաժիններ, որտեղ տեղադրված են չափորոշիչով պահանջվող կոնտակտային տվյալները:

Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայության համար առավելագույն միավորով գնահատվել են Գավառի, Սևանի, Գյումրու, Մարալիկի, Մեղրու և Վարդենիսի քաղաքապետարանների և Գեղարքունիքի մարզի Վահանի, Վաղաշենի, Վարդենիկի գյուղապետարանների պաշտոնական կայքերը:

24) Քաղաքապետարանի/գյուղապետարանի բյուջեի եկամուտների և ծախսերի պլանը, եկամուտների և ծախսերի կատարողականները, բյուջեի մուտքերը:

ՀԿՏՀ կայքերում չափորոշիչով պահանջվող տեղեկությունների համար առկա է «Համայնքի բյուջե» բաժինը՝ իր ենթաբաժիններով և ներդիրներով, որը հնարավորություն է տալիս մատչելի դարձնել համայնքային բյուջեները: Գավառի և Գյումրու քաղաքապետարանների պաշտոնական կայքերը ևս ունեն համապատասխան բաժիններ:

Դիտարկման ընթաքում հաշվի է առնվել, թե տեղադրվա՞ծ են պահանջվող բոլոր տեղեկությունները 2015թ. կտրվածքով:

Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայության համար առավելագույն միավորով գնահատվել են Գեղարքունիքի մարզի 10, Շիրակի մարզի 6 և Սյունիքի մարզի 5 համայնքապետարանների կայքեր:

25) Համայնքներում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի, շենքերի և շինությունների, տրանսպորտային միջոցների մասին տեղեկատվություն:

ՀԿՏՀ կայքերում այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների համար նախատեսված են «Գույքի կառավորում» բաժնում 3 ենթաբաժիններ՝ «Հողատարածքներ», «Շինություններ» և «Փոխադրամիջոցներ»: Սակայն յուրաքանչյուր ենթաբաժնում տեղեկատվության որոնման համար «Սեփականութ. ձև» սյունակում պետք է ընտրել դիտարկվող համայնքի անունը և սեղմելով «Փնտրել» կոճակը՝ տեսնել որոնվող տեղեկությունների առկայությունը/բացակայությունը: Անշուշտ, փնտրման նման տարբերակները կրկին պահանջում են որոշակի փորձառություն, ինչը հատուկ չէ սովորական այցելուին:

Գավառի քաղաքապետարանի պաշտոնական կայքն այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների համար ունի «Գույք» ենթաբաժինը, սակայն Գյումրու քաղաքապետարանի պաշտոնական կայքը համապատասխան բաժին չունի:

Դիտարկված բոլոր կայքերում չափորոշիչով պահանջվող տեղեկությունները գնահատվել են՝ ելնելով դրանց ամբողջականությունից: Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայության համար առավելագույն միավորով են գնահատվել Գավառի, Սևանի, Ագարակի քաղաքապետարանների և Գեղարքունիքի մարզի Ծաղկունքի, Նորատուսի գյուղապետարանների կայքերը:

26) Համայնքներում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային կարգով օտարման և մրցութային կարգով վարձակալության կամ կա-

ռուցապատման իրավունքի տրամադրման վերաբերյալ հայտարարությունները՝ տեքստային և գրաֆիկական տեղեկություններով փաթեթը:

Դիտարկված բոլոր կայքերում այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների համար համապատասխան բաժիններ չկան, այդ պատճառով տեղեկություններ գտնելու համար որոնում է իրականացվել «աճուրդ», «մրցույթ» բառերով: Սովորաբար այս տեղեկությունները տեղադրված են լինում հայտարարություններում և ավագանու նիստերի օրակարգերում: Չափորոշիչով պահանջվող տեղեկությունները գնահատվել են ըստ ամբողջականության (նշենք, որ սովորաբար բացակայում է գրաֆիկական տեղեկություններով փաթեթը): Դիտարկվել են մինչև 30.12.2015թ. տեղադրված հայտարարությունները:

Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայության համար առավելագույն միավորով գնահատվել է միայն Գյումրու քաղաքապետարանի կայքը:

27) Գնումների մասին հայտարարությունները:

Դիտարկված բոլոր կայքերում այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների համար համապատասխան բաժիններ չկան, բացառությամբ Սևանի քաղաքապետարանի կայքի: ՀԿՏՀ համայնքային կայքերում այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունները գտնելու համար տարբեր բանալի բառերով որոնումը արդյունքներ ի հայտ չբերեց:

Ինչպես արդեն նշել ենք, ի տարբերություն ՀԿՏՀ տիպային կայքերի՝ Սևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում առկա է «Գնումների հայտարարություններ» բաժին-պատուհան, որի սեղմումով բացվում է ՀՀ ֆինանսների նախարարության պետական գնումների պաշտոնական ինտերնետային կայքը՝ http://gnumner.am/: Այս կայքում համայնքի անունը փնտրելով կարելի է ծանոթանալ Սևանի քաղաքապետարանին վերաբերող ինչպես ընթացիկ, այնպես և ժամկետանց գնումների հայտարարություններին:

«Գնումներ» բանալի բառով որոնում է իրականացվել նաև Գյումրու քաղաքապետարանի պաշտոնական կայքում, որի արդյունքում գտնվել են մի քանի համապատասխան հայտարարություններ, սակայն 2013 թ. և 2014 թ. վաղեմության:

Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայության համար որևէ համայնքային կայք առավելագույն միավորով չի գնահատվել:

28) Համայնքում տեղի ունեցող իրադարձությունների մասին տեղեկատվությունը:

Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների համար դիտարկվել են բոլոր կայքերի «Նորություններ» բաժինները և իրականացվել է գնահատում ըստ տեղադրված տեղեկությունների քանակի՝ ելնելով յուրաքանչյուր համայնքի առանձնահատկություններից՝ քաղաքային կամ գյուղական, շատ կամ քիչ բնակչություն ունեցող, հին կամ նոր տեղեկություններ և այլն: Ուշադրություն է դարձվել այն հանգամանքին, որ տեղեկությունները վերաբերեն համայնքում տեղի ունեցող իրադարձություններին և ոչ թե համայնքապետարանների գործունեությանը:

Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայության համար առավելագույն միավորով գնահատվել են Գավառի, Սևանի, Գյումրու, Ազարակի, Գորիսի, Կապանի քաղաքապետարանների կայքերը:

29) ՏԻՄ-երի ընտրությունների հետ կապված տեղեկատվությունը (համայնքի ղեկավարի, ավագանու անդամի թեկնածուները, ընտրատեղամասերը, ընտրացուցակներ, ընտրությունների արդյունքներ և այլն):

ՀԿՏՀ կայքերի «Համայնք» բաժնում առկա է «Ընտրություններ» ենթաբաժինը, սակայն սա-

կավաթիվ համայնքների կողմից են համապատասխան ենթաբաժնում տեղեկություններ տեղադրվել: Համապատասխան բաժիններ չունեն նաև Գավառի և Գյումրու քաղաքապետարանների կայքերը:

Ըստ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի http://www.elections.am/ կայքի՝ 2015թ. ընթացքում ըստ մարզերի ՏԻՄ ընտրություններ տեղի են ունեցել հետևյալ համայնքներում՝

1. Գեղարքունիքի մարզ

Համայնքը	Օրը	ՏԻՄ ընտրություններ	
Գեղհովիտ	07.06.2015	Համայնքի ղեկավարի	-
Դդմաշեն	06.12.2015	-	Ավագանու անդամի
Ձովաբեր	06.12.2015	Համայնքի ղեկավարի	-

2. Շիրակի մարզ

Համայնքը	Օրը	ՏԻՄ ընտրություններ	
Մարալիկ	13.09.2015	Համայնքի ղեկավարի	-
Անուշավան	15.03.2015	Համայնքի ղեկավարի	-
Անուշավան	06.12.2015	-	Ավագանու անդամի
Արևիկ	06.12.2015	-	Ավագանու անդամի
Բասեն	06.12.2015	Համայնքի ղեկավարի	-
Գեղանիստ	06.12.2015	Համայնքի ղեկավարի	-
Նահապետավան	06.12.2015	Համայնքի ղեկավարի	Ավագանու անդամի

3. Սյունիքի մարզ

Համայնքը	Օրը	ՏԻՄ ընտրություններ	
Հարթաշեն	08.11.2015	Համայնքի ղեկավարի	-
Վաղատուր	06.12.2015	Համայնքի ղեկավարի	-

Դիտարկումների արդյունքներով՝ ՏԻՄ ընտրությունների մասին հնարավորիս ամբողջական տեղեկություններ (ներառյալ՝ թեկնածուներ, տեղամասեր, արդյունքներ) են տեղադրվել Գեղարքունիքի մարզի Դդմաշենի և Շիրակի մարզի Նահապետավանի գյուղապետարանների կողմից, հետևապես այս կայքերը գնահատվել են առավելագույն միավորով: Շիրակի մարզի Ախուրյանի գյուղապետարանի կայքում ևս տեղադրված են 2012թ. տեղի ունեցած ՏԻՄ ընտրությունների մասին ոչ ամբողջական տեղեկություններ, քանի որ բացակայում են աղյուսակային տվյալները՝ թեկնածուներ, տեղամասեր, արդյունքներ և այլն:

Առավելագույն միավորով են գնահատվել նաև այն համայնքապետարանները (Սևան, Նորատուս), որոնք իրենց կայքերում տեղադրել են հնարավորինս ամբողջական տեղեկություններ 06.12.2015թ. ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի հետ կապված: Շիրակի մարզի Հայրենյաց և Հոռոմ գյուղապետարանների կայքերում ևս տեղադրված են տեղեկություններ վերջին համապետական հանրաքվեի և 18.02.2013թ. ՀՀ Նախագահի ընտրությունների հետ կապված, սակայն դրանք ամբողջական չեն, քանի որ բացակայում են աղյուսակային տվյալները՝ թեկնածուներ, տեղամասեր, արդյունքներ և այլն:

Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայության համար առավելագույն միավորով գնահատվել են Գեղարքունիքի մարզի Դդմաշենի, Նորատուսի և Շիրակի մարզի Նահապետավանի գյուղապետարանների կայքերը:

30) Ընտանեկան նպաստ կամ հրատապ օգնություն ստացող ընտանիքների ցուցակներ:

Դիտարկված բոլոր կայքերն ունեն «Նպաստառուների ցուցակ» բաժինը: Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունները գնահատվել են ըստ ամբողջականության: Հաշվի ենք առել 2015թ. ընթացքում յուրաքանչյուր ամսվա համար տեղադրված ցուցակների առկայությունը: Ըստ այդմ՝ առավելագույն միավորով գնահատվել են Գավառի, Սևանի, Գյումրու, Կապանի, Մեղրու քաղաքապետարանների և Շիրակի մարզի Այգաբացի գյուղապետարանի կայքերը:

31) Տեսաձայնային նյութեր և նկարներ:

ՀԿՏՀ համայնքային կայքերում առկա են «Տեսադարան» և «Պատկերասրահ» բաժինները:

Գավառի քաղաքապետարանի կայքն ունի «Տեսանյութեր» բաժինը, իսկ լուսանկարները տեղադրված են նորություններում:

Գյումրու քաղաքապետարանի կայքն ունի «Քաղաքապետարանի ԺԱՄ» ենթաբաժինը, որտեղ պարբերաբար տեղադրվում են այդ հաղորդաշարի տեսանյութերը: Կայքում առկա է նաև «Լուսանկարներ» ենթաբաժինը, որտեղ տեղադրված են սակավ քանակով լուսանկարներ, սակայն լուսանկարները տեղադրված են նաև նորություններում:

Այս չափորոշիչով պահանջվող տեսաձայնային նյութերը և նկարները գնահատվել են՝ կրկին հաշվի առնելով յուրաքանչյուր համայնքի առանձնահատկությունները՝ քաղաքային կամ գյուղական, շատ կամ քիչ բնակչություն ունեցող, հին կամ նոր տեղեկություններ, ԶԼՄ ունեցող և չունեցող համայնքներ և այլն: Ըստ այդմ՝ առավելագույն միավորով գնահատվել են Գավառի, Սևանի, Գյումրու, Ագարակի, Գորիսի, Կապանի քաղաքապետարանների և Գեղարքունիքի մարզի Նորատուսի գյուղապետարանի կայքերը:

32) Առցանց հարցումներ:

ՀԿՏՀ համայնքային կայքերում առկա է «Հարցումներ» ենթաբաժինը, հետևապես դիտարկվել է այս չափորոշիչով պահանջվող առցանց հարցումների առկայությունը:

Գավառի և Գյումրու քաղաքապետարանների կայքերը այս չափորոշիչով պահանջվող հարցումների համար համապատասխան բաժիններ չունեն:

Այս չափորոշիչով պահանջվող տեղեկությունների առկայության համար առավելագույն միավորով գնահատվել է միայն Սևանի քաղաքապետարանի կայքը:

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մոնիտորինգի արդյունքները ցույց են տալիս, որ ՏԻՄ-երի համացանցային տեղեկատվական մատչելիության ապահովման ոլորտը շարունակական կատարելագործման կարիք ունի: Այս հետազոտությունը, մեծ հաշվով, միտված է նպաստել նրան, որ համայնքի անդամներն այցելեն համայնքային պաշտոնական համացանցային կայքեր, ստանան անհրաժեշտ տեղեկություններ, օգտվեն մատուցվող ծառայություններից, իրականացնեն հասարակական վերահսկողություն՝ դրանով իսկ նպաստելով իրենց համայնքների կառավարման արդյունավետության բարձրացմանը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ համայնքի անդամների առջև հաշվետու լինելը, նրանց գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը, տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարման սկզբունքներից են: Արդի պայմաններում այս սկզբունքների կենսագործումն առավել արդյունավետ և համապարփակ կարող է իրականացվել համայնքային համացանցային պաշտոնական կայքերի միջոցով: Նրանց տեղեկատվական մատչելիությունը պետք է ուղղված լինի թափանցիկության և համայնքային կառավարման արդյունավետության բարձրացմանը, լուծի տեղեկատվական ռեսուրսների հանրային մատչելիության խնդիրը՝ դրանով իսկ դրական ազդեցություն ունենալով քաղաքացիների կյանքի որակի վրա:

Իրականացված հետազոտության արդյունքում կարող ենք փաստել, որ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց պաշտոնական կայքերում ներկայացված տեղեկատվությունը մասամբ է ընդգրկում այն ծավալը, որը պետք է ներկայացվեր ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան: Արձանագրեցինք նաև, որ համայնքային պաշտոնական կայքերը համայնքների բնակիչների կողմից քիչ են օգտագործվում, ուստի կայքերի օգտագործման արդյունավետության բարձրացման հարցի քննարկումը շատ հրատապ է:

Ներկայումս համայնքային պաշտոնական կայքերի ստեղծումը մեր երկրում դեռևս օրենսդրական պարտադիր պահանջ չէ: Ինչպես արդեն նշել ենք, օրենսդրորեն սահմանված չէ «համայնքային պաշտոնական համացանցային կայք» հասկացությունը: Միաժամանակ տարբեր իրավական ակտերում գործածվում են և՛ համացանցային կայք, և՛ ինտերնետային կայք անվանումները:

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. ապրիլի 8-ի N280-Ա հրամանը ներկայումս այն կարևոր իրավական ակտն է, որը պետք է նպաստի համայնքային պաշտոնական կայքերի ստեղծմանն ու գործարկմանը: Այս ուղղությամբ իրականացվող գործընթացները պետք է հանգեցնեն նրան, որ տեղական ինքնակառավարման համակարգի օրենսդրությունը պարտադրի ՏԻՄ-երին ունենալ և վարել պաշտոնական կայքեր: Հետևապես տեղական ինքնակառավարման ոլորտի պատասխանատու գործադիր մարմինները պետք է հետևողականորեն աշխատեն համայնքային պաշտոնական կայքեր ստեղծելու և նրանց կողմից պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները կատարելու ուղղությամբ:

Իրականացված հետազոտությունը ցույց տվեց, որ վերոհիշյալ հրամանի ընդունումից և համայնքապետարանների կողմից անգամ համայնքային պաշտոնական կայքի վարման կարգ հաստատելուց հետո գործող կայքերը դեռևս չեն համապատասխանեցվել պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջներին: Նշենք հիմնական բացթողումները:

- Կայքերում բացակայում են նվազագույն պահանջներին համապատասխան քաղաքապետարանի/գյուղապետարանի՝
  - ✓ պատմությունը,
  - ✓ հիմնական խնդիրներն ու գործառույթները,
  - ✓ կառուցվածքային և (կամ) առանձնացված ստորաբաժանումների, իր ենթակայության մարմինների խնդիրներն ու գործառույթները, գտնվելու վայրերը, աշխատակազմի կոնտակտային տվյալները,
  - ✓ իրականացված ստուգումների, ուսումնասիրությունների, աուդիտի մասին տեղեկատվությունը,
  - ✓ գնումների մասին հայտարարությունները:
  - ✓ Կայքերում առկա են համապատասխան բաժիններ կամ ենթաբաժիններ, սակայն դրանք տեղեկություններ չեն պարունակում:

- Հաճախ անհրաժեշտ տեղեկություններ գտնելը պահանջում է ժամանակ, հմտություն, մեկ կամ մի քանի քայլով իրականացվող որոնում: Օրենսդրությամբ պահանջվող նվազագույն տեղեկությունները ներկայացված են տարբեր բաժիններում, հետևապես ամբողջական տեղեկատվություն ստանալ հնարավոր չէ:

- ՏԻՄ-երի ընթացիկ գործունեության և համայնքում տեղի ունեցող իրադարձությունների մասին տեղեկատվությունը բազմաթիվ համայնքապետարանների կողմից չի ներկայացվում և օպերատիվ չի թարմացվում: Այս առումով հիմնականում ավելի պասսիվ են գյուղապետարանները:

- Կայքերում սակավաթիվ են թափուր պաշտոն զբաղեցնելու մասին տեղեկությունները, համայնքներում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային կարգով օտարման և մրցութային կարգով վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման վերաբերյալ հայտարարությունները՝ ներառյալ տեքստային և գրաֆիկական տեղեկություններով փաթեթը, մինչդեռ այս տեղեկությունները տեղադրվում են ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային www.azdarar.am կայքում: Եթե անգամ առկա են թափուր պաշտոն զբաղեցնելու մասին հայտարարությունները, ապա բացակայում են մրցույթի արդյունքները և դրանց բողոքարկման կարգը:

- Սակավաթիվ համայնքապետարանների կողմից են պարբերաբար տեղադրվում ավագանու նիստերի մասին հայտարարությունները: Բացակայում է դրանց թարմացմանը հետևելու հնարավորությունը:

- Առավել հազվադեպ են հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների հրավերները: Հրավերներին կից չեն հրապարակում նորմատիվ իրավական ակտի նախագիծը, իրավական ակտի ընդունման հիմնավորումը, ինչպես նաև նախագիծ մշակող մարմնի հայեցողությամբ այլ նյութեր:

- ՀԿՏՀ հիման վրա գործող կայքերն ունեն առցանց որոշ ծառայություններ տրամադրելու հնարավորություններ, սակայն ոչ բոլոր համայնքներն են օգտագործում այս գործիքները, լրացնում դրանք կամ գրանցում ելակետային տվյալները:

- Դիտարկված ոչ բոլոր կայքերն են ապահովում շաբաթական 7 օր, օրվա մեջ 24-ժամյա հասանելիություն:

7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

N	Առաջարկություն	Ում է ուղղված
1	Օրենսդրորեն սահմանել «համայնքային պաշտոնական համացանցային կայք» հասկացությունը:	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
2	ՀՀ համապատասխան իրավական ակտերում կատարել անհրաժեշտ փոփոխություններ՝ ապահովելով «համացանց» և «ինտերնետ» բառերի օգտագործման միասնականություն՝ կիրառելով «համացանց» բառը:	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
3	Համայնքային պաշտոնական համացանցային կայքերը համապատասխանեցնել ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. ապրիլի 8-ի N80-Ա հրամանով սահմանված նվազագույն պահանջներին:	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՏԻՄ-եր
4	Մինչ համայնքների խոշորացման գործընթացի ավարտը՝ 5000 և ավել բնակիչ ունեցող համայնքների ՏԻՄ-երի համար սահմանել համայնքների պաշտոնական համացանցային կայքերի վարման կարգի պարտադիր հաստատման որոշակի ժամկետ և այդ նպատակով ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. ապրիլի 8-ի N280-Ա հրամանում կատարել համապատասխան լրացում՝ անդրադառնալով ֆինանսական, կադրային և տեխնիկական ապահովության կարգավորման հարցերին:	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
5	Ստեղծել հատուկ կառույց ՏԿ նախարարության ներսում (կամ հանձնարարել որևէ այլ կազմակերպության)՝ համայնքային պաշտոնական կայքերը ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան շահագործելու գործընթացներում ՏԻՄ-երին մեթոդական, տեխնիկական, տեխնոլոգիական և ծրագրային ապահովության հարցերում պարբերական կենտրոնացված աջակցություն ցուցաբերելու նպատակով:	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն Մարզպետարաններ
6	Համայնքային համացանցային պաշտոնական կայքերը համալրել «Կայքի քարտեզ» նավարկման (navigation) միջոցով, որը հնարավորություն կտա առավել դյուրին գտնել կայքերում տեղադրված տեղեկությունները:	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՏԻՄ-եր
7	Զարգացնել համայնքային համացանցային պաշտոնական կայքերի հնարավորությունները ՏԻՄ-երի կողմից քաղաքացիներին և իրավաբանական անձանց առցանց տրամադրվող ծառայությունների մատուցման իրականացման ոլորտում:	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՏԻՄ-եր
8	Զարգացնել համայնքային համացանցային պաշտոնական կայքերի տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորությունները՝ ավելի հարմարավետ և դյուրին դարձնելով ընդլայնված որոնումը, որոնումը կայքերի տարբեր բաժիններում:	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՏԻՄ-եր
9	Համայնքային համացանցային պաշտոնական կայքերում առավել ամբողջական և հագեցված ներկայացնել ՏԻՄ գործունեությունը՝ կարևորելով տեղեկությունների սոցիալական նշանակությունը, որպեսզի տեղեկությունները տեղադրվեն ոչ թե ձևական կողմն ապահովելու, այլ հանրային շահերին ծառայելու նպատակով:	ՏԻՄ-եր

N	Առաջարկություն	Ում է ուղղված
10	Համայնքային համացանցային պաշտոնական կայքերում ներկայացնել և օպերատիվ թարմացնել ՏԻՄ-երի ընթացիկ գործունեության և համայնքում տեղի ունեցող իրադարձությունների մասին տեղեկատվությունը:	ՏԻՄ-եր
11	Ապահովել համայնքային համացանցային պաշտոնական կայքերում թափուր պաշտոն զբաղեցնելու մասին տեղեկություններով՝ ներառյալ հայտարարությունները, մրցույթի արդյունքները, դրանց բողոքարկման կարգը:	ՏԻՄ-եր
12	Ապահովել համայնքային համացանցային պաշտոնական կայքերում համայնքներում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային կարգով օտարման և մրցութային կարգով վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման վերաբերյալ հայտարարություններով՝ ներառյալ տեքստային և գրաֆիկական տեղեկություններով փաթեթը:	ՏԻՄ-եր
13	Ապահովել համայնքային համացանցային պաշտոնական կայքերում ավագանու նիստի ժամանակի, վայրի իրազեկումը և նիստի օրակարգի նախագիծը տեղադրել կայքերի «Հայտարարություններ» բաժնում՝ ավագանու նիստից առնվազն 7 օր առաջ:	ՏԻՄ-եր
14	Հնարավորության պարագայում՝ համայնքային համացանցային պաշտոնական կայքերում «Հայտարարություններ» և «Հաշվետվություններ» բաժինները ենթարկել կառուցվածքային և բովանդակային փոփոխությունների՝ Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքի համապատասխան ենթաբաժինների օրինակով, որտեղ համապատասխան տեղեկությունները ներկայացված են ժամանակագրական կարգով, առկա են տեղեկությունների օրացուցային պահոցներ:	«Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ ՏԻՄ-եր
15	Ապահովել համայնքային համացանցային պաշտոնական կայքերում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների հրավերների տեղադրումը՝ կից հրապարակելով նորմատիվ իրավական ակտի նախագիծը, իրավական ակտի ընդունման հիմնավորումը, ինչպես նաև նախագիծ մշակող մարմնի հայեցողությամբ այլ նյութեր:	ՏԻՄ-եր
16	Ապահովել համայնքային համացանցային պաշտոնական կայքեր շաբաթական 7 օր, օրվա մեջ 24-ժամյա հասանելիություն:	ՏԻՄ-եր

Հավելված N1
ՏԵՂԵԿԱՆՔ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

(կազմված է 09.11.2015թ. Եվրասիա համագործակցություն հիմնադրամի գրասենյակում կազմակերպված «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը և համայնքային կայքերի զարգացման հեռանկարները» թեմայով շնորհանդես-քննարկմանը մասնակիցներին տրամադրված նյութի հիման վրա)

Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը ստեղծվել է «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ի կողմից «ՀՀ Պետական հատվածի արդիականացման» ծրագրի շրջանակներում՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության պատվերով: Այն նպաստում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կատարվող աշխատանքների կառավարման արդյունավետության բարձրացմանը, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը, ՏԻՄ գործունեության թափանցիկության և վերահսկելիության մակարդակի բարձրացմանը:

ՀԿՏՀ հիմնական բաղադրիչներից են. «համայնքի բյուջետավարման համակարգ», «մարդկային ռեսուրսների կառավարման համակարգ», «փաստաթղթաշրջանառության համակարգ», «համայնքային գույքի կառավարման համակարգ», «համայնքի ղեկավարի և ավագանու գործունեության կառավարման համակարգ» և այլն:

ՀԿՏՀ-ն տեղադրվել և գործարկվել է ՀՀ շուրջ 550 համայնքներում:

- 11 քաղաքային համայնքներում ստեղծվել են քաղաքացիների սպասարկման գրասենյակներ (այդ գրասենյակները տեղակայված են քաղաքապետարանների 1-ին հարկերի ընդարձակ սրահներում: Գրասենյակներում քաղաքացիներին մատուցվում են բազմաթիվ ծառայություններ):
- 446 համայնքապետարաններում ստեղծվել են համակարգչային տեղային ցանցեր:

Ստեղծված կառավարման տեղեկատվական համակարգերը շահագործելու համար ընդհանուր առմամբ ուսուցանվել են մոտ 3000 համայնքային մասնագետներ:

- Նախաձեռնության շահառուներն են 550 համայնքների ղեկավարները, ավագանու անդամները (մոտ 3800), համայնքների ղեկավարների աշխատակազմերը (մոտ 4050 մարդ), այդ համայնքների քաղաքացիները և կազմակերպությունները:

Հավելված N2
Համայնքային պաշտոնական կայքերում բովանդակության հետազոտության և վերլուծության համար ընդունված չափորոշիչները ըստ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. ապրիլի 8-ի N280-Ա հրամանի

1) Քաղաքապետարանի/գյուղապետարանի պատմությունը
2) Քաղաքապետարանի/գյուղապետարանի ընթացիկ գործունեության մասին տեղեկատվությունը
3) Քաղաքապետարանի/գյուղապետարանի կառուցվածքը (հաստիքացուցակ, աշխատակիցների ցուցակ, աշխատակիցների կոնտակտային տվյալներ) և գրաֆիկական պատկերը
4) Քաղաքապետարանի/գյուղապետարանի հիմնական խնդիրներն ու գործառույթները
5) Քաղաքապետարանի/գյուղապետարանի կառուցվածքային և (կամ) առանձնացված ստորաբաժանումների, իր ենթակայության մարմինների խնդիրներն ու գործառույթները, գտնվելու վայրերը, աշխատակազմի կոնտակտային տվյալները
6) Այն նորմատիվ ակտերը կամ դրանց հղումները, որոնցով կարգավորվում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը
7) Տեղեկություններ իրականացվող /իրականացված ծրագրերի մասին (ծրագրերի ցանկը, տեղեկություններ ծրագրերի իրականացման շրջանակներում անցկացվող միջոցառումների մասին, հաշվետվություններ)
8) Քաղաքապետարանում/գյուղապետարանում իրականացված ստուգումների, ուսումնասիրությունների, աուդիտի մասին տեղեկատվություն
9) ՏԻՄ-երի կողմից ընդունվող իրավական ակտերի նախագծերը և որոշումները (համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներ, աշխատակազմի քարտուղարի հրամաններ)
10) Համայնքի ղեկավարի, ավագանու ուղերձները, ավագանու կանոնակարգը
11) Քաղաքապետարանի/գյուղապետարանի գործունեության վերաբերյալ հաշվետվություններ, զեկույցներ և այլ տեղեկատվություն
12) ՏԻՄ ներկայացվող՝ ՀՀ օրենսդրությամբ և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դիմումների, տեղեկատվություն ստանալու մասին հարցումների և այլ փաստաթղթերի օրինակելի ձևերը, դրանց լրացման վերաբերյալ ցուցումները, ինչպես նաև պաշտոնատար անձանց գործողությունների (անգործությունների) վարչական և քրեական կարգով վիճարկման կարգը
13) Թափուր պաշտոն զբաղեցնելու մասին տեղեկությունները՝ թափուր պաշտոնների ցանկը, ներկայացվող պահանջները, աշխատանքի ընդունման կարգը, մրցույթի արդյունքները և դրանց բողոքարկման կարգը կամ հղում համապատասխան մարմնի պաշտոնական կայքին

14) Պաշտոնական միջոցառումների մասին տեղեկությունները, որոնք կազմակերպվում են քաղաքապետարանի/գյուղապետարանի կողմից (ավագանու նիստեր, համայնքի ղեկավարի մոտ խորհրդակցություններ և այլն)
15) Համայնքի, քաղաքապետարանի մասին ԶԼՄ-ներում հրապարակումները կամ դրանց հղումները
16) Քաղաքապետարանին/գյուղապետարանին կամ դրանց պաշտոնատար անձանց տրված մրցանակներն ու շնորհակալագրերը
17) Համայնքի ղեկավարի, ավագանու անդամների անունները, ազգանունները, կենսագրությունը, կոնտակտային տվյալները
18) Համայնքի զարգացման ծրագրերը
19) Տեղական տուրքի և վճարների դրույքաչափերը
20) Համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը և վայրը
21) Քաղաքապետարանի/գյուղապետարանի կողմից մատուցվող ծառայությունների (այդ թվում առցանց), ընթացակարգերի նկարագրություն, դրանց վերաբերյալ պարզաբանելու իրավասություն ունեցող անձի կոնտակտային տվյալները
22) Հղումներ պետական մարմինների, ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ կառավարության, համապատասխան մարզպետարանի և, առկայության դեպքում, նաև իր ենթակայության մարմինների պաշտոնական կայքերին
23) Քաղաքապետարանի/գյուղապետարանի կոնտակտային տվյալները՝ փոստի հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն, ինտերնետային կայքի հասցեն, հասցեի քարտեզային պատկերը, հեռախոսահամարները, ֆաքսը
24) Քաղաքապետարանի/գյուղապետարանի բյուջեի եկամուտների և ծախսերի պլանը, եկամուտների և ծախսերի կատարողականները, բյուջեի մուտքերը
25) Համայնքներում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի, շենքերի և շինությունների, տրանսպորտային միջոցների մասին տեղեկատվություն
26) Համայնքներում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային կարգով օտարման և մրցութային կարգով վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման վերաբերյալ հայտարարությունները՝ տեքստային և գրաֆիկական տեղեկություններով փաթեթը
27) Գնումների մասին հայտարարությունները
28) Համայնքում տեղի ունեցող իրադարձությունների մասին տեղեկատվությունը
29) ՏԻՄ-երի ընտրությունների հետ կապված տեղեկատվությունը (համայնքի ղեկավարի, ավագանու անդամի թեկնածուները, ընտրատեղամասերը, ընտրացուցակներ, ընտրությունների արդյունքներ և այլն)
30) Ընտանեկան նպաստ կամ հրատապ օգնություն ստացող ընտանիքների ցուցակներ
31) Տեսաձայնային նյութեր և նկարներ
32) Առցանց հարցումներ

Հավելված N3
Համայնքապետարանների համացանցային պաշտոնական կայքերում տեղեկությունների միավորներով գնահատման սանդղակ

ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ԿԱՅՔԵՐ		ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԻ ԿԱՅՔԵՐ		ԵՐՐՈՐԴ ԽՄԲԻ ԿԱՅՔԵՐ		ՉՈՐՐՈՐԴ ԽՄԲԻ ԿԱՅՔԵՐ		ՀԻՆԳԵՐՈՐԴ ԽՄԲԻ ԿԱՅՔԵՐ	
Տեղեկությունների **ամբողջականության բարձր աստիճան** (ներկայացված է տեղեկությունների ամբողջ անհրաժեշտ ծավալը և դրա վերաբերյալ տեղեկատվությունը շարադրված է ամբողջ ծավալով)՝ **79-100%:**		Տեղեկությունների **ամբողջականության միջինից բարձր աստիճան** (ներկայացված է տեղեկությունների հիմնական ծավալը, սակայն դրա վերաբերյալ տեղեկատվությունը շարադրված է ոչ ամբողջ ծավալով, կամ ներկայացված է տեղեկությունների ոչ ամբողջ ծավալը)՝ **56-78%:**		Տեղեկությունների **ամբողջականության միջին աստիճան** (ներկայացված է տեղեկությունների միջին ծավալը, տեղեկատվությունը շարադրված է միջին ծավալով կամ ներկայացված է տեղեկությունների միջին ծավալը)՝ **34-55%:**		Տեղեկությունների **ամբողջականության ցածր աստիճան** (տեղեկատվությունը ներկայացված է հատվածական)՝ **12-33%:**		Տեղեկությունների **ամբողջականության խիստ ցածր աստիճան** (ներկայացված են շատ քիչ, միայն ժամկետանց տեղեկություններ)՝ **0-11 %:**	
9 միավոր	8 միավոր	7 միավոր	6 միավոր	5 միավոր	4 միավոր	3 միավոր	2 միավոր	1 միավոր	0 միավոր